9.qxd 10/05/2026 15:32 Page 1

ԳԵՂԱՄԱ ՇԱՀԱՏԱՐՀ

Քաղաքական, հասարակական, մշակութային թերթ 11 մայիսի 2026թ. թիվ 9 (637)

ՀՀ ՎԱՐՉԱՊԵՏ ՆԻԿՈԼ ՓԱՇԻՆՅԱՆՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԱՅՑՈՎ ԵՂԱՎ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՈՒՄ

Ապրիլի 29-ին աշխատանքային այցով Գեղարքունիքի մարզ ժամանեց ՀՀ Վարչապետ Նիկոլ Փաշինյանը՝ իրականացված սոցիալ-տնտեսական եւ կենսական նշանակության ծրագրերը տեղում դիտարկելու նպատակով:

Այցի ընթացքում ՀՀ Վարչապետին ուղեկցում էին՝ ՀՀ ՏԿԵ նախարար Դավիթ Խուդաթյանը, ՀՀ ԿԳՄՍ նախարար Ժաննա Անդրեասյանը, ՀՀ Գեղարքունիքի մարզպետ Կարեն Սարգսյանը, Գեղարքունիքի մարզի համայնքների ղեկավարները, պաշտոնական այլ անձինք:

ՀՀ Վարչապետ Նիկոլ Փաշինյանի այցի առաջին կանգառը Գավառ համայնքում էր, որտեղ նա մասնակցեց Բերդկունք բնակավայրի նոր մանկապարտեզի բացման արարողությանը: Վարչապետը շրջեց մանկապարտեզում, ծանոթացավ իրականացված աշխատանքներին: Սուբվենցիոն ծրագրի ընդհանուր արժեքը կազմել է ավելի քան 464 միլիոն դրամ, որի 75 տոկոսը կամ ավելի քան 348 միլիոն դրամը հատկացրել է Կառավարությունը: Արդյունքում՝ կառուցվել է 1865 քառակուսի մետ մակերեսով երկհարկանի, արդի չափորոշիչներին համապատասխան մանկապարտեզի շենք, որը նախատեսված է 90 սաների համար: Բերդկունքի մանկապարտեզ կհաճախեն նաեւ հարեւան Հայրավանք բնակավայրի երեխաները:

Այցի երկրորդ կանգառը Գավառ համայնքի Սարուխան գյուղում էր, որտեղ երկրի ղեկավարը ծանոթացավ Սարուխանի թիվ 2 միջնակարգ դպրոցում էր, որը վերանորոգվել է նույն ծրագրի շրջանակում: 340 աշակերտի համար նախատեսված Նորատուս բնակավայրի դպրոցի վերանորոգման ու արդիականացման համար պետական միջոցներից ծախսվել է ավելի քան 427 միլիոն դրամ:

Այցի չորրորդ կանգառը Մարտունի համայնքի Ծովասար գյուղում էր, որի մանկապարտեզի շենքը կառուցվել ու շահագործվել է վերջերս, ՀՀ կառավարության կողմից իրականացվող սուբվենցիոն ծրագրերի շրջանակներում: Ծրագրի պայմանագրային արժեքը կազմել է ավելի քան 202 միլիոն դրամ, որ 65 տոկոսը կամ ավելի քան 131 միլիոն դրամը հատկացվել է ՀՀ պետական բյուջեից: Արդյունքում՝ կառուցվել է երկհարկանի 650 քառակուսի մետր ընդհանուր մակերեսով մանկապարտեզի շենք, բարեկարգվել է բակը:

Այցի հինգերորդ կանգառը Մարտունի քաղաքի Երեւանյան եւ Մյասնիկյան փողոցների շինհրապարակներում էր, որտեղ այս պահին ընթանում են հիմնանորոգման աշխատանքներ: Ծրագրի իրականացման համար ՀՀ կառավարությունը հատկացրել է 677 միլիոն դրամ:

Այցի վեցերորդ կանգառը Մարտունի համայնքի Աստղաձոր գյուղում էր, որտեղ 2025 թվականի ապրիլից շահագործվել ու բացվել է մոդուլային տիպի 144 տեղ հզորությամբ մսուր-մանկապարտեզը:

/շարունակությունը՝ էջ 2-ում/

ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ ԿԱՐԵՆ ՍԱՐԳՍՅԱՆԻ ՈՒՂԵՐՁԸ ՀԱՂԹԱՆԱԿԻ ԵՎ ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ՏՈՆԻ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ

Սիրելի՛ հայրենակիցներ,

Մայիսի 9-ը մեզ համար ոչ միայն հաղթանակի, այլեւ խաղաղության արժեքը վերահիմաստավորելու օր է: Այս օրը մենք հարգանքով հիշում ենք բոլոր նրանց, ովքեր պայքարեցին ֆաշիզմի դեմ՝ հանուն մարդկության ազատ ու արժանապատիվ ապագայի: Հայ ժողովուրդը նույնպես իր կարեւոր ներդրումն ունեցավ այդ պայքարում՝ ցուցաբերելով խիզախություն եւ նվիրում:

Այս հաղթանակը մեզ համար պատմության էջ չէ միայն. այն նաեւ հիշեցնում է, թե որքան թանկ արժեք են խաղաղությունն ու մարդկային համերաշխությունը: Պատերազմների ու անկայունության պայմաններում աշխարհն այսօր կրկին կանգնած է խաղաղության պահպանման եւ անվտանգության ամրապնդման կարեւոր խնդրի առաջ, իսկ մեզ համար առավել կարեւոր է՝ կարողանալ պաշտպանել մեր պետականությունը, ապահովել մեր ժողովրդի անվտանգ կյանքն ու վստահ ապագան:

Այսօր, երբ մեր տարածաշրջանում խաղաղության պահպանման յուրաքանչյուր քայլ ունի առանձնահատուկ նշանակություն, մենք պարտավոր ենք առավել պատասխանատու լինել մեր պետության, մեր հասարակության եւ գալիք սերունդների հանդեպ: Ուժեղ, զարգացող, անվտանգ եւ արժանապատիվ Հայաստանը մեր լավագույն պատասխանն է պատմության բոլոր փորձություններին եւ մեր լավագույն հարգանքի տուրքը՝ բոլոր նահատակների հիշատակին:

Խոնարհում բոլոր հերոսների ու զոհվածների հիշատակի առաջ:

Փա՛ռք հերոսներին, եւ կեցցե՛ Հայաստանի Հանրապետությունը:

ՑԻԵԶԵՐԱԿԱՆ ՃԱՄՓՈՐԴՈՒԹՅՈՒՆ

Լուռ հեռացանք ու քայլեցինք անդադրում՝
Երազելով հավերժական հեռուներ...

Եղիշե Չարենց

Բզեզներն են արթնացել լուսաբացի ծեգի հետ
Եվ լցրել են հովիտը համերգներով միալար:
Սավառնում են վեր ու վար, ապա նստում անարատ
Ծաղիկների բույլերին՝ գույների մեջ անհամար:
Ծայր է առնում գունգեղ, խորհրդավոր մի հեքիաթ
Սարահարթում կուսական, բուրումնավետ ու մաքուր:
Բզեզներն են համբուրում ծաղիկներին թերթ առ թերթ,
Սիրուց քամում դրախտի անմահական դեղնեկտար:
Իսկ ծաղիկներն համբույրից հարսնանում են սիրառատ
Հանդեսի մեջ ամառվա՝ ցնծագին ու քնքշաբար,
Կոկոնները նազանքով բացում շռայլ ու շաղոտ՝
Երկնքի դեմ շողակաթ, անսանձ կրքով մի հզոր:
Գետն է իջնում սրընթաց լեռան լանջից՝ վարար, հորդ,
Խառնում շառաչն օդի հետ ու հորինում նվագներ,
Լույսն է շոյում հրաչյա, արեգնային, ակնդետ
Ամեն քարափ, արահետ, բեղմնավորող հող ու ջուր...
Ու դաջվում են մտքիս մեջ պատկերները հատ առ հատ,
Տարիների մշուշում փայլատակում հուզավառ,
Ակնթարթներն անցողիկ երջանկորեն, անարատ
Հեղեղում են իմ հոգին, քաշում-տանում հեռուներ՝
Դեպ եթերներ անսահման, դեպի երկինք աստղազարդ,
Ուր շրջում են, թափառում մասնիկները կենարար,
Ուր չեն լինում արցունքներ, սուգ ու շիվան, ծանր վիշտ,
Ուր Երազն ու Գալիքը կրկին գտնում են իրար...



Խոսրով Խլղաթյան

9.qxd 10/05/2026 15:32 Page 2

ԳԱՎԱՌ ՔԱՂԱՔՈՒՄ ՀԱՆԴԻՍԱՎՈՐՈՒԹՅԱՄԲ ՆՇՎԵՑ ԱԿԱՆԱՎՈՐ ԳԻՏՆԱԿԱՆ ԱՎԵՏԻՔ ԲՈՒՌՆԱԶՅԱՆԻ ԾՆՆԴՅԱՆ 120-ՐԴ ՏԱՐԵԴԱՐՁԸ

«Մեր ապագան» կրթամշակութային բարեգործական հիմնադրամի նախաձեռնությամբ ու կազմակերպչական ջանքերով Գեղարքունիքի մարզկենտրոն Գավառ քաղաքում հանդիսավորությամբ նշվեց ԽՍՀՄ ականավոր գիտնական, ռազմաբժշկական ծառայության գեներալ-մայոր, ԽՍՀՄ առողջապահության նախարարի տեղակալ Ավետիք Բուռնազյանի ծննդյան 120-րդ տարեդարձը:

«Մեր ապագան» կրթամշակութային բարեգործական հիմնադրամի նախաձեռնող խումբը գլխավոր տնօրեն Վահրամ Կարապետյանի գլխավորությամբ այցելեց Գավառ քաղաքի այն վայրեր, որտեղ ժամանակին գտնվել են Ավետիք Բուռնազյանի հայրական տունը եւ դպրոցական շենքերը՝ հարգանքի տուրք մատուցելու նշանավոր հայորդու հիշատակին: Այնուհետ նրանք այցելեցին քաղաքային գերեզմանոց եւ ծաղիկներ խոնարհեցին Ավետիք Բուռնազյանի ծնողների շիրիմին:

Գավառի Սուրբ Աստվածածին եկեղեցում Ավետիք Բուռնազյանի հիշատակին կատարվեց Օրհնության կարգ՝ ձեռամբ Հայ Առաքելական եկեղեցու Գեղարքունյաց թեմի առաջնորդական տեղապահ Տեր Իսահակ վարդապետ Պողոսյանի եւ աղոթակցությամբ Գեղարքունյաց թեմի հոգեւոր դասի:

Միջոցառումը շարունակվեց Գավառի երկրագիտական թանգարանում, որտեղ կրթամշակութային հաստատությունների աշխատակիցներին ու անհատ քաղաքացիներին ներկայացվեց Ավետիք Բուռնազյանի անցած քաղաքացիական, ռազմական ու գիտական ուղին:

-Ավետիք Իգնատի Բուռնազյանը ծնվել է 1906 թվականի ապրիլի 20-ին, Նոր Բայազետ քաղաքում, մահկանացուն կնքել Մոսկվայում: Նա ԽՍՀՄ հայտնի բժիշկ էր, ռազմական եւ քաղաքացիական առողջապահության կազմակերպիչ, ԽՍՀՄ առողջապահության նախարարի տեղակալ (1956—1981), բժշկական գիտությունների թեկնածու, բժշկական ծառայության գեներալ-լեյտենանտ (1945), Սոցիալիստական աշխատանքի հերոս, Լենինյան եւ ԽՍՀՄ պետական մրցանակների դափնեկիր: Մասնակցել է խորհրդային առաջին ատոմային ռումբի մշակմանը, ԽՍՀՄ «ատոմային վահանի» ստեղծողներից մեկն է: Բուռնազյանը ատոմային բնագավառի բժշկության հիմնադիրներից է, մասնակցել է միջուկային սուզանավերի անձնակազմի, տիեզերական թռիչքների կենսաբժշկական աջակցության կազմակերպման խնդիրների լուծմանը: Ավետիք Բուռնազյանը միաժամանակ իր մեծ ավանդն է ունեցել Հայրենական մեծ պատերազմում տարած պատմական հաղթանակի մեջ: Նրա անմիջական մասնակցությամբ ստեղծվել է թիվ 6 կլինիկական հիվանդանոցը, որպես ԽՍՀՄ Առողջապահության նախարարության 3-րդ գլխավոր վարչության առողջապահական համակարգի հիմնական բժշկական հաստատություն: Ավետիք Բուռնազյանը 1924-1928 թվականներին սովորել է Երեւանի պետական համալսարանի բժշկական ֆակուլտետում, այնուհետեւ ուսումը շարունակել է Լենինգրադի Սերգեյ Կիրովի անվան ռազմաբժշկական եւ Միխայիլ Ֆրունզեի անվան ռազմական ակադեմիայում:

1935-1940 թվականներին եղել է Մոսկվայի մարզային կլինիկայի եւ Մոսկվայի 1-ին բժշկական ինստիտուտի ռազմասանիտարական ամբիոնի ղեկավարը: 1939 թվականին, Երկրորդ համաշխարհային պատերազմի ժամանակ նա մասնակցել է Արեւմտյան Ուկրաինայի եւ Արեւմտյան Բելառուսիայի ազատագրմանը, իսկ 1939-1940 թվականներին որպես համազորային 10-րդ բանակի սանիտարական վարչության պետ, Խորհրդա-ֆիննական պատերազմում կազմակերպում է բանակի ռազմասանիտարական աշխատանքները եւ անմիջական մասնակցություն ունենում Մաններհայմի գծի ամրությունների ճեղքմանը եւ վիրավորվում է մարտերից մեկի ժամանակ:

1941 թվականի դեկտեմբերից մինչեւ 1943 թվականի նոյեմբերը եղել է Կալինինյան ճակատի բժշկական ծառայության ղեկավարը: 1943 թվականի մարտի 31-ին ստացել է գեներալ-մայորի կոչում, իսկ 1945 թվականի հունիսի 19-ին՝ գեներալ-լեյտենանտի: 1945 թվականին եղել է Հեռավորարեւելյան ռազմական 1-ին օկրուգի բժշկական վարչությանպետը: 1946 թվականին եղել է ԽՍՀՄ նախարարների Խորհրդի 1-ին գլխավոր բժշկական ծառայության ղեկավարը: Գավառի երկրագիտական թանգարանում բացված է Ավետիք Բուռնազյանին նվիրված ցուցադրական անկյուն, որն առաջիկայում կհարստացվի նոր նյութերով,-ներկայացրեց թանգարանի տնօրեն Մարիաննա Մուսոյանը:

-Մեր դպրոցական եւ ուսանողական տարիներին Ավետիք Բուռնազյանն արդեն հայտնի անուն էր դասագրքերում, մենք հպարտանում էինք նրանով, որ ունենք նման պանծալի համաքաղաքացի գիտնական, շատ էինք ոգեշնչվում: Ավետիք Բուռնազյանի, Սամվել Քոչարյանցի, Հրաչյա Բունիաթյանի, մեր համերկրացի մի շարք այլ հայտնի գիտնականների շնորհիվ է հարստացել ոչ միայն հայ, այլ նաեւ համաշխարհային մտքի պատմությունը, նման մարդկանց գոյությամբ ու գործունեությամբ է մեր պատմությունը ձեռք բերել համշարհային կշիռ ու որակ,-ներկայացրեց Գավառի պետական համալսարանի դասախոս Համլետ Դաջոյանը:

-Մենք այսօր հատուկ քայլեցինք Ավետիք Բուռնազյանի մանկության ու պատանության տարիների, նրա ծնողների հիշատակի հետքերով՝ զգալու եւ հասկանալու համար, թե որտեղից է սնվել Ավետիք Բուռնազյանի միտքը, որտեղից է նա ստացել այն էներգիան, որի շնորհիվ կարողացել է դառնալ նման կարգի մեծություն համաշխարհային գիտության մեջ: Գնահատեք ձեր ունեցած արժեքները, ցույց տվեք հյուրերին, ցույց տվեք աշխարհին, թե որքան մեծ մարդիկ ունեք դուք, որոնց շնորհիվ ճանաչվում է մեր հայրենիքը, ճանաչվում ենք մենք: Գնահատեք նրանց, ու կտեսնեք դրա արդյունքները: Թվում է, թե Ավետիք Բուռնազյանի անունն ու գործը վաղուց պիտի մոռացված լինեին, քանի որ նրա մահից տասնյակ տարիներ են անցել, բայց ոչ, նրա գործը նոր-նոր է սկսում ապրել ու շարունակվել: Մենք գիտենք, որ նա ԽՍՀՄ գերգաղտնի մարդկանցից է եղել, նրա կյանքի մասին շատ քիչ բան է հայտնի: Դրա համար հավաքում ենք համապատասխան տեղեկություններ ու հավաքածուներ նրա կյանքի ու գործունեության մասին, որոնք սիրով կտրամադրենք Գավառի երկրագիտական թանգարանին՝ Ավետիք Բուռնազյանի ցուցադրական անկյունը հարստացնելու նպատակով,- ներկայացրեց «Մեր ապագան» կրթամշակութային բարեգործական հիմնադրամի գլխավոր տնօրեն Վահրամ Կարապետյանը:

-Ես շարունակում եմ աշխատել Բուռնազյանի անվան կենտրոնում, որն հիմա ավելի է զարգացել, քան եղել է բիոֆիզիկայի ինստիտուտի ստեղծման պահին. այն այժմ ունի շատ հիվանդանոցներ ու մասնաճյուղեր: Դա հենց նշանակում է, որ շարունակվում է Ավետիք Բուռնազյանի անունն ու գործը: Նրա մասին շատ էր պատմում իմ դասախոս Լեոնիդ Իլյինը: Նա նշում էր, թե ինչ դեր է ունեցել Ավետիք Բուռնազյանը ռադիացիոն ճառագայթումներից պաշտպանվելու միջոցների հայտնաբերման ու կիրառման գործում:

/շարունակությունը՝ էջ 3-ում/

ՀՀ ՎԱՐՉԱՊԵՏ ՆԻԿՈԼ ՓԱՇԻՆՅԱՆՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԱՅՑՈՎ ԵՂԱՎ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՈՒՄ

/սկիզբը՝ էջ 1-ում/

Ծրագրի ընդհանուր արժեքը կազմել է ավելի քան 927 միլիոն դրամ, որի արդյունքում շահագործման է հանձնվել մեկհարկանի, 1290 քառակուսի ընդհանուր մակերեսով, 144 տեղ հզորությամբ մսուր-մանկապարտեզի նոր շենքը, բարեկարգվել է բակը, տեղադրվել են 20 կիլովատտ հզորության ֆոտովոլտային կայան եւ արեւային ջրատաքացուցիչներ:

Այցի յոթերորդ կանգառը Մարտունի համայնքի Վարդենիկ գյուղում էր, որտեղ ՀՀ Վարչապետին ներկայացվեցին 150 սանի համար նախատեսված մանկապարտեզի կապիտալ վերանորոգման աշխատանքները: Սուբվենցիոն ծրագրի ընդհանուր արժեքը կազմել է ավելի քան 358 միլիոն դրամ, որի 75 տոկոսը կամ ավելի քան 268 միլիոն դրամը հատկացրել է Կառավարությունը: Արդյունքում՝ կապիտալ վերանորոգվել է երկհարկանի, արդի չափորոշիչներին համապատասխան 1600 քառակուսի մետր ընդհանուր մակերեսով մանկապարտեզի շենքը, բարեկարգվել է բակը, երեսպատվել են արտաքին պատերը:

Այցի ութերորդ կանգառը Վարդենիս համայնքում էր, որտեղ վարչապետ Նիկոլ Փաշինյանին ներկայացվեցին Շողակաթ-Վարդենիս հանրապետական նշանակության ավտոճանապարհի միջին նորոգման աշխատանքների արդյունքները:

Ծրագրի պայմանագրային արժեքը կազմել է 889 միլիոն 800 հազար դրամ, որն ամբողջությամբ հատկացվել է պետբյուջեի միջոցներից:

Ծրագրի իրականացման արդյունքում նորոգվել է 18,9 կիլոմետր երկարության ավտոճանապարհ:

Այցի իններորդ կանգառը Վարդենիս համայնքի Գեղամասար բնակավայրում էր, որտեղ ՀՀ Վարչապետը ներկա գտնվեց 50 սանի համար նախատեսված վերակառուցված մանկապարտեզի բացման հանդիսավոր արարողությանը: Սուբվենցիոն այս ծրագրի պայմանագրային արժեքը կազմել է ավելի քան 161 միլիոն դրամ, որտեղ ՀՀ պետական բյուջեի մասնաբաժինը ավելի քան 159 միլիոն դրամ է:

Այցի տասներորդ կանգառը Ճամբարակ քաղաքում էր, որտեղ վարչապետը ծանոթացավ Գ. Նժդեհ փողոցի սկզբնամասում հենապատի վերակառուցման աշխատանքներին: Ծրագրի 2024 թվականի 1-ին փուլի պայմանագրային արժեքը կազմել է ավելի քան 69 միլիոն դրամ, որի արդյունքում վերականգնվել է 135 գծամետր հենապատ եւ մեկ վթարային վիճակում գտնվող կամուրջ: 2025 թվականին ծրագրի 2-րդ փուլի համար Կառավարությունը հատկացրել է ավելի քան 99 միլիոն դրամ. վերականգնվել է 256 գծամետր հենապատ:

Այնուհետ Նիկոլ Փաշինյանը շրջայց կատարեց Ճամբարակ քաղաքում, ծանոթացավ կենտրոնական փողոցի եւ Վերին Ճամբարակ թաղամասի փողոցների, ինչպես նաեւ Թթուջուր եւ Վահան բնակավայրերի Հ-30 հանրապետական նշանակության ավտոճանապարհի լուսավորության ցանցի կառուցման աշխատանքներին: Սուբվենցիոն ծրագրի ընդհանուր արժեքն ավելի քան 182 միլիոն դրամ է, որից 70 տոկոսը կամ ավելի քան 127 միլիոն դրամը հատկացրել է Կառավարությունը: Արդյունքում՝ թվով 10 փողոցներում կկառուցվի 11780 գծամետր նոր լուսավորության ցանց: Ճամբարակում ընթացքի մեջ են նաեւ 1,5 կմ ավտոճանապարհի հիմնանորոգման աշխատանքները:

Վարչապետն այցելեց նաեւ Ճամբարակի Տիգրան Մեծի 9 եւ Հ. Նադարյան 3 հասցեներում կառուցված վորքաութ տեսակի մարզահրապարակներում, ծանոթացավ ստեղծված պայմաններին: Ծրագրի իրականացման համար Կառավարությունը հատկացրել է ավելի քան 31 միլիոն դրամ:

ՀՀ Վարչապետ Նիկոլ Փաշինյանի աշխատանքային հագեցած այցն ավարտվեց Սեւան համայնքի Լճաշեն գյուղի ջերմոցային տնտեսությունում: Այն գործում է 2026 թվականից, մասնավոր ներդրումային ծրագրի շրջանակներում, 3,9 միլիարդ դրամ արժեքով, 10,5 հեկտար տարածքի վրա, որտեղ բացվել է 150 աշխատատեղ: Պետական սուբսիդիան տրամադրվել է շուրջ 390 միլիոն դրամի չափով: Ջերմատանն արտադրվում է վարունգ եւ լոլիկ:

«Գեղամա աշխարհ»

9.qxd 10/05/2026 15:32 Page 3

ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՈՒՄ ՀԱՆԴԻՍԱՎՈՐՈՒԹՅԱՄԲ ՆՇՎԵՑ ՀԱՂԹԱՆԱԿԻ ԵՎ ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ՏՈՆԸ

Մայիսի 9-ին՝ Հաղթանակի եւ խաղաղության տոնի առթիվ, Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմի ղեկավար այրերը ՀՀ Գեղարքունիքի մարզպետին փոխարինող, Գեղարքունիքի մարզպետի տեղակալ Ջանիկ Բազեյանի գլխավորությամբ, ծաղկեպսակ են դրել եւ ծաղիկներ խոնարհել Գավառ քաղաքի Մեծ Հայրենականի զոհերի հուշարձանին:

Ինչպես տեղեկացրին Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմից, ծաղկեդրման արարողության ընթացքում հիշատակի եւ խոնարհումի խոսքով հանդես է եկել Գավառ համայնքի Սարուխան գյուղի 105- ամյա բնակիչ, Մեծ Հայրենականի վետերան Մեխակ Ավետիսյանը:

Հանդիսավոր արարողությանը մասնակցել են Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմի, Գավառի համայնքապետարանի, մարզային եւ համայնքային ենթակայության կրթամշակութային հաստատությունների ներկայացուցիչներ, դպրոցականներ, հոգեւորականներ:

Արարողության մասնակիցներն այնուհետեւ ներկա են գտնվել Գավառի Սուրբ Աստվածածին եկեղեցում մատուցված հոգեհանգստյան կարգին, որը մատուցվել է Գեղարքունյաց թեմի հոգեւոր դասի կողմից՝ Գեղարքունյաց թեմի առաջնորդական տեղապահ Տեր Իսահակ վարդապետ Պողոսյանի ձեռամբ:

Սեւան համայնքում Խաղաղության եւ հաղթանակի օրվա տոնակատարության մեկնարկը տրվել է Սեւանի քաղաքային պանթեոնում, որտեղ Սեւան համայնքի ղեկավար Սարգիս Մուրադյանի գլխավորությամբ կատարվել է պսակադրում ու ծաղկեդրում բոլոր ժամանակների հերոս քաջորդիների հիշատակը հավերժացնող հուշախաչքարին:

Սեւանցիները հարգանքի տուրք են մատուցել նաեւ 2020 թվականի 44- օրյա պատերազմում անմահացած, ինչպես նաեւ հայրենիքի պաշտպանության համար իրենց կյանքը զոհաբերած հերոսների հիշատակը հավերժացնող հուշախաչքարին:

Սեւանցիները հարգանքի տուրք են մատուցել նաեւ 2020 թվականի 44- օրյա պատերազմում անմահացած, ինչպես նաեւ հայրենիքի պաշտպանության համար իրենց կյանքը զոհաբերած հերոսների հիշատակի մոտ՝ խոնարհելով ծաղիկներ:

Օրը համախմբել է բոլորին մեծ շուրջպարի շուրջ՝ մասնակցությամբ Սեւանում գործող պարային համույթների:

Մարտունի քաղաքի Հայրենական մեծ պատերազմում եւ Արցախյան ազատագրական պայքարում նահատակված հայորդիների հիշատակները հավերժացնող հուշարձաններին ծաղիկներ են խոնարհել համայնքի ղեկավար Հովհաննես Հովեյանը, ՏԻՄ պաշտոնյաներ, հանրային ծառայողներ, պետական, ուժային կառույցների եւ բնակավայրերի վարչական ղեկավարներ, Արցախյան պատերազմների մասնակիցներ եւ նրանց ընտանիքի անդամներ, համայնքի բնակիչներ:

Տոնական միջոցառումներ են տեղի ունեցել նաեւ Վարդենիս ու Ճամբարակ համայնքներում, որտեղ նույպես համայնքների ղեկավարներ Ահարոն Խաչատրյանի ու Վազգեն Ադամյանի գլխավորությամբ համայնքապետարանների աշխատակազմերի անդամները, կրթամշակութային հիմնարկների աշխատակիցները եւ անհատ քաղաքացիներն իրենց հարգանքի տուրքն են մատուցել հայրենիքի ազատության համար իրենց կյանքերը զոհաբերած հայորդիների հիշատակին:

Տոնական միջոցառումներ են տեղի ունեցել նաեւ մարզի գյուղական բնակավայրերում, կրթամշակութային հաստատություններում:

Խոսրով Խլղաթյան

ԳԱՎԱՌ ՔԱՂԱՔՈՒՄ ՀԱՆԴԻՍԱՎՈՐՈՒԹՅԱՄԲ ՆՇՎԵՑ ԱԿԱՆԱՎՈՐ ԳԻՏՆԱԿԱՆ ԱՎԵՏԻՔ ԲՈՒՌՆԱԶՅԱՆԻ ԾՆՆԴՅԱՆ 120-ՐԴ ՏԱՐԵԴԱՐՁԸ

/սկիզբը՝ էջ 2-ում/

Կա մի պրեպարատ, ամենաարդյունավետ միջոցը, ստեղծված ԽՍՀՄ ժամանակներում, որը կոչվում Բ-192՝ հենց Բուռնազյանի պատվին: Նրա ստեղծած ռադիացիոն պաշտպանական միջոցները հաջողությամբ ու արդյունավետորեն կիրառվել են նաեւ 1986 թվականին տեղի ունեցած Չեռնոբիլյան աղետի ժամանակ: Ավետիք Բուռնազյանն իր արժանին տեղն է ունեցել ԽՍՀՄ ամենաականավոր գիտնականների շարքում,- ներկայացրեց Ռուսաստանի բժշկական գիտությունների ակադեմիայի եւ Ռուսաստանի գիտությունների ակադեմիայի ակադեմիկոս, բժշկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, ՌԴ բժշկակենսաբանական գործակալության Ավետիք Բուռնազյանի անվան պետական գիտական կենտրոնի կենսաբժշկական եւ ադիտիվ տեխնոլոգիաների կենտրոնի գլխավոր գիտաշխատող Իգոր Ուշակովը:

-Մեզ համար այսօր կատարյալ հայտնություն եղավ՝ լինել այն քաղաքում, որտեղ ծնվել, հասակ առել ու դպրոցական կրթություն է ստացել մեծանուն գիտնական Ավետիք Բուռնազյանը: Մենք շատ գոհ ենք, որ դուք ըստ արժանվույն եք գնահատում ու մեծարում ձեր մեծանուն հայրենակցին ու նույնքան էլ հավատացած եմ, լսելով շնորհալի երեխաների ելույթները, որ այս հողը շարունակելու է ծնել Ավետիք Բուռնազյանի նման տաղանդներ: Մենք պետք է ոչ միայն համատեղ հիշենք, այլ նաեւ պետք է համատեղ շարունակենք ու զարգացնենք այն գործը, գիտական այն ժառանգությունը, որը մեզ թողել է Ավետիք Բուռնազյանը: Այդիսկ պատճառով պետք է երկուստեք զարկ տանք համագործակցությանն ու եղբայրական հարաբերություններին, ավելի ամրապնդենք մեր կապերը, մեկտեղենք մեր ջանքերը: Տպավորված ենք հեռանում այս քաղաքից, այս գեղեցիկ միջավայրից ու բարեկամական ջերմ մթնոլորտից,- նշեց ՌԴ առողջապահության նախարարության Ռադիոլոգիայի բժշկական հետազոտական ազգային կենտրոնի Ա.Ֆ. Ցիբի անվան մասնաճյուղի տնօրեն, բժշկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, Ռուսաստանի գիտությունների ակադեմիայի թղթակից անդամ Սերգեյ Իվանովը:

Միջոցառումների շարքն ավարտվեց Գավառ քաղաքի Հայրապետ Խաչատրյանի անվան արվեստի դպրոցում «Մեր ապագան» կրթամշակութային բարեգործական հիմնադրամի կազմակերպված տոնական համերգով, որի ընթացքում միջազգային մրցույթների դափնեկիր, Խաչատրյան տրիոյի ջութակահար Կարեն Շահգալդյանը, Արամ Խաչատրյան տուն-թանգարանի տնօրեն, Երեւանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի պրոֆեսոր, Խաչատրյան տրիոյի դաշնակահար Արմինե Գրիգորյանը եւ միջազգային մրցույթների դափնեկիր, դաշնակահար Սոնա Բարսեղյանը հանդես եկան Արամ Խաչատրյանի մի շարք ստեղծագործությունների կատարմամբ:

Ապրիլի 28-ին Երեւանում, ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիայի հարթակում, «Մեր ապագան» հիմնադրամն անցկացրեց ծրագրի հիմնական միջոցառումները՝ ցուցահանդեսի բացումը եւ կոնֆերանսը:

«Ավետիք Բուռնազյան – 120 տարի. ժառանգություն, որը միավորում է Ռուսաստանն ու Հայաստանը» խորագրով ցուցահանդեսում ներկայացված էին արխիվային փաստաթղթեր, հազվագյուտ լուսանկարներ եւ նյութեր ռուսական ու հայկական աղբյուրներից, որոնք արտացոլում են նրա գիտական ավանդը ատոմային առողջապահության համակարգի ստեղծման գործում:

Ցուցահանդեսին ծանոթանալուց հետո մասնակիցներն անցկացրել են կոնֆերանս, որի շրջանակներում քննարկվել են ճառագայթային բժշկության զարգացման, միջուկային անվտանգության եւ միջազգային գիտական համագործակցության արդի հարցերը:

-Մեր հիմնադրամի համար մեծ պատիվ է՝ անդրադառնալ Ավետիք Բուռնազյանի հարուստ ժառանգությանը նրա 120-ամյա հոբելյանի տարում: Հատկանշական է հոբելյանական միջոցառումների անցկացումը հենց Հայաստանի Հանրապետությունում՝ գիտնականի պատմական հայրենիքում, ինչը կատարվածին առանձնահատուկ նշանակություն է հաղորդում: Նման մարդկանց ժառանգությունը ամուր հիմք է դրել ապագա սերունդների համար: «Մեր ապագան» հիմնադրամի առաքելությունն է՝ ոչ միայն պահպանել այդ ժառանգությունը, այլեւ ուղղորդել այն դեպի ապագա,- նշել է կրթամշակութային բարեգործական հիմնադրամի տնօրենը:

Հայաստանի Հանրապետությունում Ռուսաստանի Դաշնության արտակարգ եւ լիազոր դեսպան Սերգեյ Կոպիրկինը շեշտել է Ավետիք Բուռնազյանի անգնահատելի ավանդը հայրենական եւ համաշխարհային ճառագայթային բժշկության ու անվտանգության կայացման եւ զարգացման գործում:

Ողջույնի խոսքով հանդես է եկել ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիայի նախագահ Աշոտ Սաղյանը՝ մասնակիցներին մաղթելով արդյունավետ աշխատանք եւ նշելով Ավետիք Բուռնազյանի ժառանգությանն անդրադառնալու կարեւորությունը գիտության եւ բժշկության զարգացման համատեքստում:

ՌԴ առողջապահության նախարար Միխայիլ Մուրաշկոյի պաշտոնական ուղերձն ընթերցել է Ա. Ֆ. Ցիբայի անվան բժշկական ռադիոլոգիական գիտական կենտրոնի տնօրեն, ՌԳԱ թղթակից անդամ, պրոֆեսոր Սերգեյ Իվանովը. «Ավետիք Իգնատեւիչի անունը անխզելիորեն կապված է ԽՍՀՄ ռազմաբժշկական ծառայության, ճառագայթային եւ տիեզերական բժշկության զարգացման հետ: Նրա լայնամասշտաբ մտածողության, պատասխանատվության եւ կազմակերպչական տաղանդի շնորհիվ սեղմ ժամկետներում ստեղծվեց ատոմային ոլորտի անձնակազմի բժշկասանիտարական ապահովման միասնական համակարգ: Հենց նա է դրել երկրի ճառագայթային անվտանգության ամուր հիմքերը՝ ապահովելով միջուկային վահանի ստեղծումը եւ խաղաղ ատոմի զարգացումը:

«Արաբկիր» բժշկական համալիրի տնօրենների խորհրդի նախագահ, պրոֆեսոր Արա Բաբլոյանը նշել է, որ գիտնականի կյանքի ուղին պրոֆեսիոնալիզմի եւ նվիրումի օրինակ է, իսկ նրա ժառանգությունը ուղենիշ է մնում բժշկական հանրության համար: Այս համատեքստում ընդգծվել է «Մեր ապագան» հիմնադրամի եւ անձամբ Վահրամ Կարապետյանի ավանդը հայրենակիցների պատմական հիշողության հանրայնացման գործում:

Բովանդակային զեկույցներով հանդես են եկել ճառագայթային բժշկության եւ գիտության ոլորտի առաջատար մասնագետները:

ՌԳԱ ակադեմիկոս, ՌԳԱ ռադիոկենսաբանության գիտական խորհրդի նախագահ Իգոր Ուշակովը իր «Յուրահատուկ գեներալ՝ միջուկային-տիեզերական բժշկության ոլորտում» զեկույցում նշել է. «Այսօր իրականացավ իմ վաղեմի երազանքը՝ այցելել Հայաստան, եւ ահա ես այստեղ եմ՝ Բուռնազյանի հայրենիքում: Հենց ատոմային նախագծի շրջանակներում է լիարժեքորեն դրսեւորվել նրա՝ որպես գիտնականի բացառիկ տաղանդը:«Մեր ապագան» հիմնադրամի աշխատանքը չափազանց կարեւոր է, քանի որ այն հետեւողականորեն հավաքում եւ գիտական շրջանառության մեջ է վերադարձնում Բուռնազյանի կյանքի եւ գործունեության մասին տվյալները»:

ՀՀ ԳԱԱ Բնական գիտությունների բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղար Ռուբեն Հարությունյանն անդրադարձել է Չեռնոբիլի վթարի հետեւանքների վերացմանը հայ մասնագետների մասնակցությանը՝ ընդգծելով Բուռնազյանի անվան կենտրոնի հետ սերտ փոխկապակցվածությունը:

Առանձնահատուկ ուշադրության է արժանացել ժամանակակից բժշկական պրակտիկային եւ ուռուցքաբանական օգնության զարգացմանը, որոնք հիմնված են Ավետիք Բուռնազյանի կողմից ներդրված գիտակազմակերպչական մոտեցումների վրա: Այս մասին խոսել են Վ. Ա. Ֆանարջյանի անվան Ուռուցքաբանության ազգային կենտրոնի փոխտնօրեն Ալեքսանդր Սեհնյանը եւ պրոֆեսոր Սերգեյ Իվանովը:

Կոնֆերանսի ընթացքում, գիտական վերլուծություններին զուգահեռ, անդրադարձ է կատարվել նաեւ Բուռնազյանի անհատականությանը: Օրագրի շրջանակներում ելույթ է ունեցել նրա ազգականը՝ Հակոբ Թերզյանը, ով ներկայացրել է հուշեր՝ լրացնելով գիտնականի եւ պետական գործչի կերպարը: Ցուցահանդեսին եւ կոնֆերանսին ներգրավված են եղել նաեւ երիտասարդության ներկայացուցիչներ:

Միջոցառումներն անցկացվել են Հայաստանի Հանրապետությունում Ռուսաստանի Դաշնության դեսպանության եւ ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիայի աջակցությամբ:

Խոսրով Խլղաթյան

9.qxd 10/05/2026 15:32 Page 4

ՕՇԱԿԱՆ՝ ՊԱՏՄԱԿԱՆ ԱՆՑՅԱԼՈՎ ՈՒ ՆԵՐԿԱՅՈՎ

Մեր երկրի ամեն մի անկյուն պատմական մեծ անցյալ ունի, ամրոց ու տաճար՝ նախաքրիստոնեական ու քրիստոնեական, այլ սրբավայրեր, կամուրջ ու բնակատեղիներ... Կան առավել հայտնի վայրեր, որոնցում տեղի են ունեցել մեր պատմության առանցքային իրողություններ: Օշական՝ գյուղ է Հայաստանի Հանրապետությունում՝ Արագածոտնի մարզկենտրոն Աշտարակից քիչ հարավ՝ Քասախ գետի ափերին:

Ինչպես բոլոր բնակավայրերը, Օշականն էլ ունի իր պատմությունը, պատմական ու ժամանակակից հուշարձանները: Հաճախ ենք լսում կամ կարդում այսպես կոչված Օշականի ճակատամարտի պատմական իրողության մասին: 336 թ. տեղի է ունեցել ճակատամարտ Մազքթաց Արշակունիների եւ Մեծ Հայքի Արշակունյաց թագավորության բանակի միջեւ: Ճակատամարտն ավարտվել է հայոց զորքի հաղթանակով: Այս առթիվ 5-րդ դարի պատմիչ Փավստոս Բյուզանդը գրում է. «...Երբ թշնամիները տեսան նրա հարձակումն իրենց վրա, քաղաքից (Վաղարշապատից) դուրս եկան, փախան դեպի առապարը, Օշական բերդի կողմը՝ ապավինելով այն անապատին ու քարքարուտ տեղերին: Սաստիկ պատերազմ եղավ: Եվ Հայոց զորավարի (Վաչե Մամիկոնյան) նիզակակիցները, որ էին Բագրատ Բագրատունին, Մեհուճդակ եւ Գարեգին Ռշտունիները, Ամատունյաց տոհմի նախարար Վահանը, Վարազ Կամինականը, հասան, խփեցին, կոտորեցին ալանների, մասքութների, հոների ու մյուս ազգերրի զորքերը...»:

Օշականը հայտնի է նաեւ ռուս-պարսկական 1826-28 թվականների պատերազմի տարիներին տեղի ունեցած իրադարձություններով: Գյուղի տարածքում ռուս-հայկական զորքերը, Աֆանասի Կրասովսկու գլխավորությամբ, 1828 թվականի օգոստոսի 17-ին հաղթեցին պարսիկ Աբաս-Միրզայի բանակին:

Բայց եւ՛ մեր ժողովրդին, եւ՛ շատ օտարների Օշականը հայտնի է՝ կապված Սուրբ Մեսրոպ Մաշտոցի հետ: Օշականի Սուրբ Մեսրոպ Մաշտոց եկեղեցին, որը 1996 թվականից Արագածոտնի թեմի առաջնորդանիստն է, գտնվում է գյուղի մեջ՝ Քասախ գետի ձախ ափին՝ հնգաթռիչք կամրջի հարեւանությամբ: Ըստ պատմական մի շարք աղբյուրների՝ ժամանակակից եկեղեցին կառուցվել է 5-րդ դարում Վահան Ամատունի իշխանի կողմից կառուցված եկեղեցու տեղում: Հայոց Քերթողահայրը՝ Մովսես Խորենացին, ով եղել է Մեսրոպ Մաշտոցի աշակերտներից եւ նրա հանձնարարականով՝ ընկերների հետ ուսման էր գնացել Բյուզանդիա, երբ վերադառնում է, արդեն մահացել էին Ամենայն Հայոց 10-րդ կաթողիկոս Սահակ Պարթեւը եւ Մաշտոցը: Խորենացին իր «Հայոց պատմություն» մատյանի «Ողբ» գլխում գրում է. «...Եվ մինչ նրանք սպասում էին մեր դարձին, որ փառավորվեին իմ անիմաստ գիտությամբ եւ լիակատար պատրաստությամբ, եւ մենք էլ Բյուզանդիայից շտապ-շտապ դիմելով, հույս ունեինք հարսանիքներում պարել, խիզախ եւ արագ շարժումներով, եւ առագաստի երգեր երգել,- այժմ, այդ ուրախության փոխարեն, գերեզմանի վրա ողբեր եմ ասում, ողորմելի հառաչելով, նույնիսկ չհասա տեսնելու նրանց աչքերի փակվելը, լսելու նրանց վերջին ձայնն ու օրհնությունը...»:

Իսկ Մաշտոցի մահվան մասին Խորենացին գրում է. «Սուրբ Սահակի վախճանվելուց վեց ամիս հետո, մեհեկան ամսի տասներեքին, երանելի Մեսրոպն էլ այս աշխարհից փոխվեց Վաղարշապատ քաղաքում, գերազանցելով բոլոր առաքինի մարդկանցից, որպիսիք այն ժամանակ կային: Որովհետեւ ամբարտավանությունը եւ մարդահաճությունը նրա վարքում երբեք տեղ չգտան, այլ հեզ, բարյացակամ եւ բարեմիտ լինելով, երեւում էր բոլորին՝ երկնայինների սովորությամբ զարդարված: Որովհետեւ նա հրեշտակի տեսք ուներ, ծննդական միտք, պայծառ էր խոսքով, գործերով ժուժկալ, մարմնով փառահեղ, սովորություններով աննման, խորհրդակցությամբ մեծ, հավատով ուղիղ, հուսով համբերող, սիրով անկեղծ, ուսուցանելիս անձանձրույթ»:

Ինչպես գիտենք՝ Սուրբ Սահակ Պարթեւը մահացել է 439 թ. սեպտեմբերի 7-ին, Բագրեւանդի Բլրոցաց գյուղում, իսկ Սուրբ Մեսրոպ Մաշտոցը՝ 440 թ. փետրվարի 17-ին (մեհեկան 13)՝ Վաղարշապատում: Ե՛վ Խորենացին, ե՛ւ Մաշտոցի կենսագիր Կորյունը հետաքրքիր երեւույթի մասին էլ են նկարագրում: «Ինչպես լսեցի բազմաթիվ եւ արժանահավատ անձերից, խաչի ձեւով աղոտ լույս էր շողում այն տան վրա, որտեղ երանելին հոգին ավանդեց: Եվ շուտով չանհետացավ այս շողը, քչերին տեսանելի չեղավ, այլ՝ բոլոր բազմությանը, այնպես որ շատ անհավատներ մկրտվեցին»: Կորյունը գրում է. «Եվ մինչդեռ Սրբի ձեռքերը կարկառված էին դեպի երկինք, խաչանման, լուսավոր շողավոր ձեւով սքանչելի տեսիլ երեւաց այն ապարանքի վրա, ուր վախճանվում էր երանելին. եւ ամեն մարդ ինքը տեսավ այդ, եւ ոչ թե ընկերը պատմեց: Եվ նա սրբերին սեր ու միաբանություն ավանդեց, մերձավորներին ու հեռավորներին օրհնությամբ պսակեց եւ հաճոյական աղոթքը Քրիստոսին հասցնելով՝ հանգավ»:

Կորյունը, ով ներկա է եղել, հիշատակում է՝ այդ օրը Սրբի մոտ են եղել նրա աշակերտներից հոգեւորականներ Հովսեփը, Թադիկը, զինվորականներից՝ Վահան Ամատունին՝ Մեծ Հայքի հազարապետը, Հմայակ Մաիկոնյանը (Վարդան Մամիկոնյանի եղբայրը), այլոք: Պատմիչները նաեւ նկարագրում են՝ ինչպես են ներկա իշխանները որոշել՝ որտեղ հուղարկավորեն Սրբին: «Վահանն ու Հմայակը, աշխարհական բազմության հետ, վերցրեցին նրան վախճանվածի պատրաստությամբ, սաղմոսներով եւ օրհնությամբ ու հոգեւոր ցնծություններով, վառած կանթեղներով ու... բարձրացան Օշական եւ այնտեղ մարտիրոսարանի մեջ դրին...»: Սա վկայում է՝ դեռեւս այն ժամանակ Օշականում եղել է Սուրբ-Մարտիրոսների հանգստարան:

Խորենացին գրում է, որ կար 3 կարծիք՝ Սրբին հուղարկավորել կամ Տարոնում՝ իր ծննդավայրում, կամ Գողթնում, կամ Վաղարշապատում՝ սրբերի հանգստարանում: «Բայց հաղթեց քաջ Վահան Ամատունին, որ ավելի ջերմեռանդ էր հավատով եւ հզոր էր մարմնով, քանզի պարսիկներն այդ ժամանակ նրան էին վստահել մեր Հայոց աշխարհի հազարապետությունը: Նա մարմինը վերցրեց եւ արժանավայել հուղարկավորությամբ տարավ իր գյուղը՝ Օշական: Եվ նույն լուսեղեն խաչի երեւույթը դագաղի վրա գնում էր դեմ հանդիման բոլոր ժողովրդին, մինչեւ նրան հողին հանձնեցին Վահանը եւ նրա սպասավոր Թաթիկը, ինչից հետո նշանն աներեւույթ եղավ: Իսկ եպիսկոպոսապետության աթոռին իբրեւ տեղապահ նստեց երանելի Մեսրոպի հրամանով նրա աշակերտը՝ Հովսեփ քահանան, որ Վայոց ձորից էր՝ Հողոցիմ գյուղից...»:

Հնարավոր է՝ Վաղարշապատից մինչեւ Օշական, որ իրարից շատ հեռու չեն, Սրբի մարմինը, մեծ թափորի ուղեկցությամբ, տարել են ձեռքի վրա: Երկնային շողքն ուղեկցել է թափորին:

Արագածոտնը վաղ միջնադարում եղել է Ամատունի նախարարական տան եպիսկոպոսների տեսչության ներքո: Իսկ Օշականն Ամատունի նախարարների կենտրոն է դարձել Հայոց թագավոր Խոսրով Բ Արշակունու օրոք՝ 330-338 թվականներին: Նույն պատմիչները տեղեկացնում են՝ 3 տարի անց՝ 443թ., Վահան Ամատունին Մաշտոցի գերեզմանի վրա եկեղեցի է կառուցում: Կորյունը գրում է. «Իսկ երեք տարի անցնելուց հետո՝ Վահան Ամատունուն հաջողվեց՝ քրիստոսասեր ջանքով սքանչելի տաճար կանգնել տաշած քանդակած քարերով եւ տաճարի ներսում շինեց Սրբի գերեզմանը: Նա Քրիստոսի կենդանարար մարմնի ու արյան սեղանի համար վայելուչ, գույնզգույն ոսկով, արծաթով ու քարերով պայծառափայլ անոթներ պատրաստեց՝ ի հիշատակ, եւ մի տեղ հավաքված բոլոր սրբերի հետ Քրիստոսի խաչակրոն վկայի՝ երանելի Մաշտոցի մարմինը փոխադրվեց տաճարի գերեզմանը: Եվ նրա Թադիկ անունով աշակերտին՝ մի զգաստ ու բարեպաշտ մարդու, եղբայրների հետ, երանության հասած Սրբի համար սպասավոր կարգեցին՝ ի փառս Աստծո»:

Սուրբ Մաշտոցի մահվան հաջորդ տարին իսկ սահմանվեց հատուկ տոն նրա հիշատակին. Սրբի գերեզմանը դարձել է ուխտատեղի: Օշականի ներկայիս Սուրբ Մաշտոց եկեղեցու մասին հիշատակություններ են թողել նաեւ հետագա դարերի պատմիչները: Թովմա Արծրունի եւ Անանուն «Պատմություն Արծրունյաց տան» գրքում կարդում ենք. «Երբ այս ամենը կատարվեց, Սուրբ Սահակը, 120 տարի ապրելուց հետո, այս աշխարհից փոխվեց հրեշտակների կարգը: Սրբի մասունքները տարան ամփոփեցին Տարոնի Աշտիշատ ավանում, Սուրբ Հովհաննես Մկրտչի եւ Աթանագինես նահատակի վկայարանի տեղում: Վեց ամիս անցնելուց հետո, նույն տարում վախճանվեց նաեւ Սուրբ Մաշտոց վարդապետը: Հայոց նախարարների բազմությունը, Վահան Ամատունու ղեկավարությամբ, որն այդ ժամանակ Հայոց սպարապետն էր, խաչի ձեւ ունեցող լույսի ուղեկցությամբ տարան եւ թաղեցին Արագածոտն կոչվող գավառի Օշական գյուղումե:

Առաքել Դավրիժեցի պատմիչը «Պատմություն» գրքում հիշատակում է. ,Նաեւ Աստծու փառքի հոյակապ, լայնանիստ, բարձրապերճ տաճարը՝ Սուրբ Մեսրոպ մեծ վարդապետի հանգստարանը, այն Մեսրոպի, որ Հայոց գրերը գտավ. ինչպես որ նրա պատմության խոսքերն են ասում, թե նրան տարան ամփոփեցին այն գյուղում, որ անվանվում է Օշական: Արդ՝ Սուրբ Մեսրոպ վարդապետի այս տաճար-հանգստարանի ողջ տանիքը վաղ ժամանակներից փլվել, նստել էր, միայն ավագ խորանն էր մնացել ծածուկ: Եվ Սուրբ հայրապետ Փիլիպոսն իր կաթողիկոսության ժամանակներում սկսեց այն եւս նորոգել, որ եւ արեց մեծ ծախսերով եւ աշխատանքով, մշակված քարով, մածուցիկ կրով մինչեւ ամբողջն ավարտեց մեր թվականի 1094 (1645թ.) տարում՝ ի փառս Աստծո»:

Օշականի եկեղեցու ներսում եղել է արձանագրություն, որը Հովհ. Շահխաթունյանցի ընդօրինակմամբ այսպես է. «Ի թվականին ՉԼԷ (737+551=1288), ես՝ Գեշմարդս էի ամիրայ եւ Հաւիկս ձեռնաւոր թողաք զցբ Կարապետին այգեացն զԱւշականու, զՄիրինու զձեռնաւորին զհարկն, զինչ որ կայր...»: 19-րդ դարում Գեւորգ Դ կաթողիկոսը (1813-1882) ծավալել է շինարարական լայն գործունեություն: 1868-ին Վաղարշապատի Մայր Տաճարի արեւելյան կողմում կառուցել է կցաշենք, որտեղ կազմակերպել է եկեղեցապատմական թանգարան, նորոգել է տվել Սուրբ Գայանե վանքը, այնտեղ կառուցել արեւմտյան կամարակապ դարպասը, կառուցել է Մայր Աթոռի միաբանների բնակելի շենքերը, Բյուրականի կաթողիկոսական ամառանոցը, 1875-1879 թվականներին վերակառուցել է Օշականի Սուրբ Մեսրոպ Մաշտոց եկեղեցին եւ այլն:

Այժմ Օշականի եկեղեցու արեւմտյան գլխավոր մուտքի վերին հատվածում սպիտակ մարմարե քարին կա հետեւյալ արձանագրությունը. «ՈՂՈՐՄՈՒԹԵԱՄԲՆ ԱՍՏՈՅՈ ՍՐԲԱԶԱՆԱԿԱՏԱՐ ՀԱՅՐԱՊԵՏ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ Տ.Տ.ԳԵՈՐԳ Դ. ԿԱԹՈՒՂԻԿՈՍ ՎԵՐԱԿԱՌՈՒՅՑ Ի ՀԻՄԱՆՑ ՁԱՅՍ ԵԿԵՂԵՑԻ ՕՇԱԿԱՆ ԳԵՂՋՍ ԵՒ ՁԴԱՄԲԱՐԱՆ ՍՐԲՈՅՆ ՄԵՍՐՊԱՅ ԹԱՐԳՄԱՆՉԻ ՄԵՐՈՅ ՈՐ Ի ԱՄԱ. ՏՐՈՔ ՀԱՅՈՑ ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ՅԱՄԻ 1879 ԵՒ ՀԱՅՈՑ ՌՅԻԹ»: 1879 թ. հոկտեմբերի 21-ին Օշականի եկեղեցին օծվել է: Ամիսներ անց՝ 1880 թվականին, եկեղեցու հարավային կողմում, Վահան Ամատունու գերեզմանի վրա, կանգնեցվել է հուշակոթող՝ «ՎԱՀԱՆ ԱՄԱՏՈՒՆԻ՝ ԻՇԽԱՆ ՀԱՅՈՑ» գրությամբ: Իսկ 1884 թ. եկեղեցուն արեւելքից կցել են երկհարկ, 8-սյունանի ռոտոնդայով պսակված զանգակատուն՝ գլանաձեւ ծավալով եւ Ավագ խորանից բացվող մուտքով: Մասնագետները գտնում են՝ սա բացառիկ է հայ եկեղեցաշինական ճարտարապետության մեջ: Այժմ եկեղեցու հարեւանությամբ կա դպրատուն, որը կառուցվել է 1913 թվականին եւ հիմնանորոգվել Ամենայն հայոց կաթողիկոս Գարեգին Ա-ի առաջնորդությամբ՝ 1996-ին: Եկեղեցու ետնաբակում է գտնվում նաեւ հայ գրերի պուրակը եւ Մաշտոցի արձանը: Ամբողջը քանդակված է կարմիր տոֆից: 1997 թ. եկեղեցու արեւմտյան կողմում, Ժ. եւ Հ. Գաբրիելյանների բարերարությամբ կառուցվել է առաջնորդարանի շենքը (ճարտարապետ՝ Հ. Բաբախանյան): Սուրբ տաճարի պատերը ներքուստ նկարազարդվել են: Արեւմտյան պատին Հ. Մինասյանի եւ Հ. Մամյանի «Փառք հայ գրի եւ դպրության» որմնանկարն է: Հարավային պատին կանգուն եւ ծնրադիր նետաձիգ զինվորներն են, նրանց գլխավերեւում՝ ուժի, հայրենիքի կենսունակության խորհրդանիշ թեւատարած արծիվը: Հյուսիսային պատին պատկերված է Հայաստանի գարունը՝ ծաղկած ծառերով, զվարթ աղջիկներով, այլ պատկերներով:

1995 թ. եկեղեցու արեւմտյան կողմում կանգնեցվել է քառակող հուշակոթող՝ արեւելյան կողին հայոց այբուբենն է քանդակված՝ տակը՝ Աստվածաշնչյան հայտնի «Ճանաչել զիմաստութիւն եւ զխրատ, իմանալ զբանս հանչճարոյ» խոսքը՝ հայերեն գրված առաջին նախադասությունը: Հարավային կողմում արեւային ժամացույց է եւ այլ գրություններ ու քանդակներ:

Զոհրաբ Ըռքոյան

9.qxd 10/05/2026 15:32 Page 5

ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՀԱՄԱՅՆՔՆԵՐՈՒՄ ՀԱՆԴԻՍԱՎՈՐՈՒԹՅԱՄԲ ՆՇՎԵՑ ՀՀ ՔԱՂԱՔԱՑՈՒ ՕՐԸ

Ապրիլի 25-ի առավոտվա ժամերից Գեղարքունիքի մարզի քաղաքային եւ գյուղական բնակավայրերում անցկացվեցին ՀՀ Քաղաքացու օրվան նվիրված միջոցառումները:

Սեւան համայնքում ՀՀ Քաղաքացու օրվա միջոցառումներ տեղի ունեցան Սեւանի բիզնես կենտրոնում եւ Լճաշեն բնակավայրի մշակույթի տանը, Ծովագյուղի երիտասարդական կենտրոնում:

Միջոցառման այս ձեւաչափի նպատակն էր՝ «քաղաքացի», «պետականություն» հասկացությունների արժեւորումը, պետության եւ հասարակության նկատմամբ հոգատար, նվիրված ու պատասխանատու վարքագծի ձեւավորումը:

Ս. Զաքարյանի անվան մշակույթի պալատում եւ Լճաշենի Ր. Հովհաննիսյանի անվան մշակույթի տանը կազմակերպվել են օրվան նվիրված մշակութային միջոցառումներ, համայնքի տարբեր բնակավայրում իրականացվել են ծառատնկման աշխատանքներ:

Օրվա միջոցառումները միավորել են կրթություն, երիտասարդություն, մշակույթ բաղադրիչները:

ՀՀ Քաղաքացու օրվա առթիվ Գավառ համայնքի Գանձակ բնակավայրում տեղի է ունեցել «Մենք ենք մեր պետությունը» խորագրով բանախոսություն, որին հաջորդել է Գանձակի երաժշտական դպրոցի եւ մշակույթի տան շնորհալիների մասնակցությամբ համերգային ծրագիր եւ ձեռքի աշխատանքների ցուցահանդես:

Վարդենիս համայնքի վարչական տարածքում՝ քաղաքում եւ բնակավայրերում, կազմակերպվել է ծառատունկ՝ որպես բնության պահպանության եւ սերունդների հանդեպ պատասխանատվության խորհրդանիշ: Ակունքի եւ Վարդենիս քաղաքի

մշակույթների տներում անցկացվել են թեմատիկ բանախոսություններ՝ «Մենք ենք մեր պետությունը» խորագրով: Վարդենիս քաղաքի Ռոմանի փողոցում տեղադրված տաղավարներում կազմակերպվել է ցուցահանդես-հյուրասիրություն:

Վարդենիսի Վիկտոր Համբարձումյանի անվան քաղաքային զբոսայգում տեղի է ունեցել տոնական համերգային ծրագիր՝ DJ KARE-ի եւ «By THE WAY BAND»-ի մասնակցությամբ:

Մարտունու մշակույթի կենտրոնում հրավիրված հանդիպման բանախոս էր Գավառի պետական համալսարանի հումանիտար մասնագիտությունների ֆակուլտետի դեկան, բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ Թաթուլ Ասոյանը: Մարտունի համայնքի Ծովասար գյուղի մշակույթի կենտրոնում ելույթ է ունեցել Մարտունու ավագ դպրոցի տնօրեն Վարդան Ավետիսյանը:

Վարդենիկի երաժշտական դպրոցում հանդիպում է կայացել Հ. Պարոնյանի անվան թատրոնի տնօրեն Լիլիթ Պետրոսյանի հետ:

Մարտունի համայնքի Վերին Գետաշեն գյուղի մշակույթի կենտրոնում հանդես է եկել Քրիստինե Արոյանը՝ «Մեր ժամանակների հերոսը-2025» մրցույթի հաղթողը:

Հանդիպումներ ու միջոցառումներ են տեղի ունեցել նաեւ Ճամբարակ համայնքի Ձիլ եւ Դպրաբակ բնակավայրերում:

Բոլոր նշված վայրերում բանախոսությունների ավարտից հետո անցկացվել է նաեւ տոնական համերգային ծրագիր:

-Միջոցառումները բաց են եղել բոլոր ցանկացողների համար: Քաղաքացու օրը եւս մեկ հնարավորություն է՝ վերարժեւորելու յուրաքանչյուրի դերը մեր պետության կառուցման եւ զարգացման գործում,- նշեցին Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմից:

«Գեղամա աշխարհ»

ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ԳԱՆՁԱԿ ԳՅՈՒՂՈՒՄ ՀՀ ՔԱՂԱՔԱՑՈՒ ՕՐԸ ՆՇՎԵՑ ԲԱՆԱԽՈՍՈՒԹՅԱՄԲ ԵՎ ԶԱՆԱԶԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐՈՎ

ՀՀ Քաղաքացու օրը Գավառ համայնքում նշանավորվեց միջոցառումների հագեցած օրակարգով: Ինչպես տեղեկացրին Գավառի համայնքապետարանի աշխատակազմից, միջոցառումներն իրականացվեցին Գանձակ բնակավայրում: Տոնական օրը մեկնարկեց Գանձակի մշակույթի տանը կազմակերպված ցուցահանդեսով, որում ներկայացված էր մշակույթի տան սաների ձեռքի աշխատանքները:

Միջոցառումների շարքը շարունակվեց «Մենք ենք մեր պետությունը» խորագրով բանախոսությամբ: Օրվա բանախոս Սեւակ Սարգսյանը ներկայացրեց պետություն-քաղաք հարաբերությունները եւ դրանցում քաղաքացու դերը:

Բանախոսի հետ ակտիվ երկխոսություն եւ քննարկում ծավալեցին մասնակից երիտասարդները, բարձրացված հարցերի շնորհիվ ամբողջացան պատկերացումները

թեմայի վերաբերյալ: Բանախոսության ավարտից հետո խարույկների վրա պատրաստվեց խորոված, եւ ավանդական ուտեստի հյուրասիրությամբ բաժակ բարձրացվեց օրվա առթիվ: Հյուրասիրվողները Գանձակ համայնքի բնակիչներն էին:

Օրը համեմվել է նաեւ գեղերվեստական միջոցառմամբ: Գանձակի մշակույթի տան դահլիճում Գանձակի երաժշտական դպրոցի սաները, բարեմաղթանքներով, հայրենասիրական ու ազգագրական երգ ու պարով ստեղծել են տոնական միջավայր:

Տոնական կիջոցառումների ավարտին Գանձակի կենտրոնական զբոսայգում Գավառ համայնքի ղեկավարի տեղակալ Գրիգոր Բոշյանը եւ Գանձակի վարչական ղեկավար Հակոբ Հակոբյանը օրն ամփոփել են խորդանշական ծառատունկով:

Ալվարդ Մանուկյան

ԳԱՎԱՌԻ ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԴՊՐՈՑԻ ՍԱՆԵՐԸ ՀԱՋՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՆ ԳՐԱՆՑԵԼ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՄՐՑՈՒՅԹ-ՓԱՌԱՏՈՆԵՐՈՒՄ

Գավառի Հենրիկ Թալալյանի անվան երաժշտական դպրոցի դհոլահարների համույթը մարտի 28-ին Վրաստանի Թբիլիսի քաղաքում մասնակցել է «WORLD OF ART-2026» միջազգային մրցույթ-փառատոնին՝ արժանանալով պատվոգրի եւ հուշանվերի:

Ինչպես տեղեկացրին Գավառի համայնքապետարանի աշխատակազմից, դհոլահարների խմբի ղեկավարն է Յուրիկ Բուդաղյանը:

Ապրիլ ամսին դպրոցի սաները հաջողությամբ մասնակցել են նաեւ «ARM PROF MUSIC FEST» մրցույթ-փառատոնին՝ գրանցելով բարձր արդյունքներ:

Առաջին կարգի եւ հատուկ մրցանակների են արժանացել Վոկալ բաժնի սաներ Հայրապետ Հայրապետյանը եւ Դինա Դրմոյանը, Երկրորդ կարգի մրցանակի՝ Հայկ Հայրապետյանը, Հայրապետ Հայրապետյանը, Արթուր Ավետիսյանը, Ալեն Հովհաննիսյանը, Գագիկ Վանեցյանը, երրորդ կարգի մրցանակի՝ Արիաննա Հովհաննիսյանը, դիպլոմների՝ Անի Ասլիկյանը, Մանե Հովեյանը, Դիաննա Ադամյանը, Լիլիթ Զաքոյանը:

Մրցանակակիրների հաջողություններն ապահովել են դասատուներ Աննա Գզրարյանը, Շահեն Շհոյանը, Գայանե Մնեյանը:

Խոսրով Խլղաթյան

ԽՐԱԽՈՒՄՎԵԼ ԵՆ ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՆԱՍՆԱԲՈՒՅԺՆԵՐԸ

Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի ղեկավար Հովհաննես Հովեյանն «Անասնաբույժի օրվա» առիթով ընդունել եւ խրախուսել է համայնքի բնակավայրերի անասնաբույժներին:

Ինչպես տեղեկացրին Մարտունու համայնքապետարանի աշխատակազմից, համայնքապետարանում հրավիրված խորհրդակցության ընթացքում մասնագիտական տոնի առթիվ անասնաբույժներին շնորհավորել են համայնքի ղեկավարը, աշխատակազմի գյուղատնտեսության եւ բնապահպանության բաժնի պետը:

Խորհրդակցության ընթացքում քննարկվել են ոլորտի նորամուծությունները, պատվաստումների իրազեկման կարեւորությունը, դեղամիջոցների պահպանման պայմաններն ու պլանավորված աշխատանքները: Շեշտադրվել է մշտական համագործակցության եւ համաճարակների նկատմամբ խիստ հսկողության անհրաժեշտությունը:

Հովհաննես Հովեյանը բարձր է գնահատել անասնաբույժների դժվարին ու պատասխանատու գործը՝ նշելով, որ այն ուղղակիորեն կապված է համայնքի եւ ընտանիքների անվտանգության հետ: Նա վերահաստատել է համայնքապետարանի պատրաստակամությունը՝ աջակցելու ծագած խնդիրների լուծմանը:

-Դուք մի՛շտ գնահատված եք եւ ու գտնվում եք մեր ուշադրության կենտրոնում,- հավելել է համայնքի ղեկավարը:

Խորհրդակցության ավարտին Մարտունի համայնքի ղեկավարը մասնագիտական պարտականությունները լավագույնս կատարելու համար անասնաբույժներին հանձնել է շնորհակալագրեր:

«Գեղամա աշխարհ»

9.qxd 10/05/2026 15:32 Page 6

ԿԱՐՄԻՐԳՅՈՒՂԻ ԴԱՆՈՅԻ ՍՈՒՐԲԸ ԵՎ ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ ՏԱՊԱՆԱՔԱՐԸ

Գեղարքունիքի մարզի Կարմիրգյուղի տարածքում բազմաթիվ, անգամ անհաշվելի են պատմաճարտարապետական հուշարձանները, որոնք գոյություն ունեն եկեղեցիների, վանքերի, կիկլոպյան ամրոցների ավերակների, բրոնզեդարյան դամբարանների, միջնադարյան խաչքար-տապանաքարերի, հնագույն բնակատեղիների, մատուռների, այլ արժեքների կամ գտածոների տեսքով:

Կարմիրգյուղի պատմության հուշարձաններին անդրադարձել են հայտնի հայագետներ Մեսրոպ արքեպիսկոպոս Սմբատյանցը, Երվանդ Լալայանը, Սեդրակ Բարխուդարյանը, Գեդեոն Միքայելյանը, Աշոտ Փիլիպոսյանը, այլ հնագետ պատմաբաններ:

Կարմիրգյուղի պատմության մշակույթի հուշարձանների մանրամասն ու ամփոփ նկարագիրը տրված է Կարմիրգյուղի արժանավոր զավակ Վաչիկ Շահբազյանի «Կարմիրգյուղ» գրքում:

Այդուհանդերձ, գրավոր ոչ մի աղբյուրում չկա հիշատակություն ո՛չ Դանոյի Սուրբ մատուռի, ոչ էլ նրանից մոտ հարյուր մետր հեռավորության վրա գտնվող օրորոցաձեւ միջնադարյան երկու տապանաքարերի մասին:

Եվ դա բնական է, քանի որ տապանաքարերը հողի տակից դուրս են բերվել միայն անցած դարի իննսունական թվականներին, իսկ Դանոյի Սուրբ մատուռը կառուցվել է ընդամենը 2024 թվականին, միջնադարյան ժամանակներում ժայռաքարի վրա քանդակված խաչերի շուրջ:

Այս երկու նորահայտ հուշարձանները գտնվում են Կարմիրգյուղի հարավ-արեւմտյան թեւում, նախկին քարի արտադրամասի մոտերքում:

Դանոյի Սուրբ նորակառույց , սրբատաշ տուֆ քարով կառուցված մատուռի ներսում կա մի չհղկված ժայռաքար, որի վրա նկատվում են քանդակված չորս խաչեր:

Ենթադրվում է, որ դրանք քանդակված կլինեն միջնադարյան ժամանակներում, իսկ տարածքն էլ, իր ժայռեղեն գոյությամբ, գուցե թե մատուռ-ճգնարան է ծառայել հավատավոր այրերի համար:

Եվ այս վայրը սրբավայր է համարվել հենց այս ժայռախաչերի գոյությամբ:

Իսկ թե ինչով է այն կապված Դանոյի անվան հետ, պարզում ենք Կարմիրգյուղի Դանիելյանների տոհմի ներկայացուցիչ, այժմ երեւանաբնակ Սամվել Դանիելյանից, ում իսկ վկայությամբ՝ 1920-ական թվականների մոտակայքում իր նախատատ Արմաղան Դանիելյանը երազում տեսնում է, որ նշված վայրում կա խաչքար, հաջորդ օրը գնում է երազում տեսած վայրը եւ քարափը քանդելով գտնում մատուռում գտնվող խաչքարը, ու այդ դեպքից հետո Կարմիրգյուղում տվյալ վայրը հայտնի է դառնում Դանոյի սուրբ անվանմամբ: Այդուհետ մարդիկ այդտեղ ուխտի են գալիս ու մոմ են վառում, տարածքը համարում սրբավայր, ավելի քան մեկ դար շարունակ:



Նորակառույց մատուռի մուտքի արտաքին պատին փակցված գրությունը պատմում է վարպետ Խաչիկի կողմից 995 թվականին կառուցված հրեշտակի խաչքարի մասին, որը կանգնեցվել է Սյունյաց Վասակ թագավորի դուստր ու Գագիկ Բագրատունու կին Կատրանիդեի պատվին, ով ըստ ավանդության, շաբաթվա մեջ երկու օր պաս է պահել ու այցելել այս սրբավայր: Այս խաչքարն ունեցել է Աստվածային զորություն եւ բուժել հիվանդություններ:

Սամվել Դանիելյանի համոզմամբ՝ այս խաչքարը եղել է հրեշտակի պատկերաքանդակով, որի վերին մասը փշրվել է արաբական արշավանքի ժամանակ, Եզիդ խալիֆի հրամանով, իսկ ներքեւի մասը պահպանվել ու այստեղ է տեղադրվել հայ բնակիչների ջանքերով:

Դանոյի Սուրբ սրբատաշ մատուռը կառուցվել է Դանոյի տոհմի ներկայացուցիչ Արեգ Դանիելյանի միջոցներով, օրհնվել 2025 թվականի սեպտեմբերի 14-ին:

Փաստորեն, այս վայրը վաղուց ոչ միայն Դանոյանների, այլ նաեւ կարմիրգյուղցիների ու այլ վայրերում ապրող մարդկանց սրբավայրն է դարձել: Չենք կարող պնդել այս փաստերի հավաստիության շուրջ, սակայն չենք էլ առարկում, որ այս տեղանքն իր մեջ պատմական միջավայր է պարունակում:

Նկատելի է նաեւ, որ այս տարածքում հին ու միջնադարյան ժամանակներում եղել է բնակավայր-սրբատեղի, ուր նաեւ թաղումներ են կատարվել:

Այս մասին էլ հենց փաստում են մատուռից դեպի հարավ, Միսաք Գասպարյանի հողամասի մեջ գտնվող երկու տապանաքարերը, որոնցից մեկը կիսով չափ ու մեկ երեսով ամբողջությամբ գտնվում է հողի տակ, իսկ մյուսը լրիվ դուրս է բերված հողի տակից, ու հստակ երեւում են պատկերաքանդակները:

Պատմաբան, հնասեր Սեւակ Արեւշատյանի բնորոշմամբ՝ անարձանագիր այս օրորոցաձեւ տապանաքարը իր ոճով նման է մեր բնակավայրերում սփռված ու 16-րդ դարում քանդակված տապանաքարերին:

Տապանաքարի հյուսիսային կողմում որսի տեսարան է պատկերված:

Ձախ կողմում հեծյալ է պատկերված, դիմացը որսի շունն է, իսկ աջ կողմում պատկերված է ձի՝ առանց հեծվորի: Ինչ-որ մեկը բռնել է ձիու սանձը: Սա կարող է նշանակել, որ հեծվորը զոհվել է մարտում կամ որս անելիս, իսկ ձին վերադարձել էր առանց տիրոջ: Այն կարող էր հիշեցնել «Հին օրերի երգը» ֆիլմում հնչող Հայաստան մայրիկի երգը:

Տապանաքարի հարավային կողմում հստակ երեւում է մարդկային ֆիգուր, ով աջ ձեռքով բռնել է սափորը, ձախ ձեռքով՝ գինու գավը, որի վրա հավերժության նշան է պատկերված, իսկ ներքեւում ուտեստներով ծանրաբեռնված սեղան է: Ավելի աջ եւս մեկ մարդկային ֆիգուր է երեւում:

Այս գեղեցիկ պատկերաքանդակը պատմում է մարդկանց վարած աշխարհիկ կյանքի մասին: Այն համարվում է հայ պատկերաքանդակային արվեստի նմուշներից մեկը, որը, անշուշտ, պետք է ներառվի Հայաստանի Հանրապետության Հուշարձանների պահպանության պետական ցանկում:

Խոսրով Խլղաթյան

ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՈՒՄ ՇԱԲԱԹՕՐՅԱԿԻ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐՈՒՄ ՆԵՐԳՐԱՎՎԵԼ ԵՆ ՇՈՒՐՋ 21 ՀԱԶԱՐ ՄԱՍՆԱԿԻՑ

Գեղարքունիքի մարզի բոլոր բնակավայրերում 2026 թվականի ապրիլի 26-ին անցկացվել է համապետական շաբաթօրյակ, որում ներգրավվել են Գեղարքունիքի մարզպետի, Գավառի, Մարտունու, Ճամբարակի, Վարդենիսի եւ Սեւանի համայնքապետարանների աշխատակազմերի, ՀՀ ՆԳՆ Փրկարար ծառայության, պարեկային ծառայության, «Սեւան Ազգային պարկի», հանրակրթական եւ առողջապահական հիմնարկների, մասնավոր ընկերությունների աշխատակիցներ, անհատ քաղաքացիներ:

Մարզային շաբաթօրյակի ախատանքների կազմակերպման նպատակով ներգրավվել է շուրջ 21 հազար մասնակից, գործի է դրվել 77 միավոր տեխնիկա, 4034 գործիք:

Կուտակված աղբից մաքրվել են բնակավայրերի մայթեզրերն ու ճանապարհեզրերը, պուրակներն ու զբոսայգիները, հուշարձանների, հիմնարկ-ձեռնարկությունների բակային տարածքները, հանրապետական ու մարզային նշանակության ճանապարհների եզրերը, լվացվում են հուշարձանները եւ շենքերի ճակատները:

ՀՀ Գեղարքունիքի մարզպետի որոշմամբ մարզպետի աշխատակազմից նշանակված պատասխանատուները կազմակերպել եւ վերահսկել են մարզի բոլոր համայնքներում եւ բնակավայրերում իրականացվող աղբահանության եւ սանիտարական մաքրման աշխատանքների պատշաճ կազմակերպման գործընթացը:

Մաքրման աշխատանքների հետ մեկտեղ համայնքների բնակավայրերի ներսում՝ մայթեզրերին ու հիմնարկ-ձեռնարկությունների բակային տարածքներում իրականացվել է ծառատունկ:

«Գեղամա աշխարհ»

ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ԲՈՒԺՀԻՄՆԱՐԿՆԵՐՈՒՄ 2026 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻՆ ԾՆՎԵԼ Է 79 ԵՐԵԽԱ

Գեղարքունիքի մարզի ծննդօգնություն իրականացնող բուժհիմնարկներում 2026 թվականի ապրիլ ամսին ծնվել է 79 երեխա՝ 41 տղա եւ 38 աղջիկ:

Ինչպես տեղեկացրին Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմի առողջապահության եւ սոցիալական հարցերի վարչությունից, 26 երեխա ծնվել է Մարտունու ծննդատանը, 25 երեխա՝ Սեւանի, 12 երեխա՝ Գավառի, 9 երեխա՝ Վարդենիսի բժշկական կենտրոններում, 4 երեխա՝ Ճամբարակի առողջության կենտրոնում:

2025 թվականի ապրիլ ամսին Գեղարքունիքի մարզի ծննդօգնություն իրականացնող բուժհիմնարկներում ծնվել է 73 երեխա՝ 38 տղա եւ 35 աղջիկ:

«Գեղամա աշխարհ»

9.qxd 10/05/2026 15:32 Page 7

ՀԱՅԿԱԿԱՆ ԸՆՏԱՆԻՔԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՆԿԱՐԱԳԻՐԸ ՀՐԱՆՏ ՄԱԹԵՎՈՍՅԱՆԻ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ՄԵՋ

/սկիզբը՝ նախորդ համարներում/

Շուշանի անհարգալից վերաբերմունքը ամուսնու հիշատակի նկատմամբ առարկայանում է սեփական զավակների ձեռքով: Աճեցված ծառը, որը ոչ միայն Ակոպի ու Մանվելի հիշատակարանն է, այլեւ հայ տղամարդու սրբազան պարտականություններից մեկը, դատապարտվում է չորանալու: Ծառի ավերումով ավերվում է ընտանիքի հայրը, նրա իշխանությունը, շվաքը իր տան եւ զավակների վրա:

Աշխենը («Օգոստոս») ակտիվ, աշխատասեր կին է, ինչին դիպչում է՝ աչքի է ընկնում մաքրության, դասավորության փայլով, սեփական եւ ֆերմային վերաբերող գործերը կատարում է մեծ եռանդով: Իր գործունյա բնավորությամբ երբեմն զայրույթով է լցվում դանդաղող, գործին անտարբերությամբ նայող Անդրոյի նկատմամբ: Ամուսնու հանդեպ կրկնվող պոռթկումը միայն Աշխենի բնույթով պայմանավորված չէ, այլեւ՝ Անդրոյի: Վերջինս փոքր-ինչ ալարկոտ, կյանքի ընթացքին, նրա փոփոխություններին անտարբեր, նախաձախնդրություն չունեցող, երբեմն հայացքն իր տան գործից ու երբեմն էլ, Աշխենից հեռու, սակայն տեսակով իր ունեցածից գոհ մարդ է:

Աշխենի մեջ մեծ նախաձախնդրություն կա կյանքում ամեն բանի նկատմամբ: Աշխենը նպատակադրող եւ լռությամբ առաջ ընթացող տեսակ է: Նա սովոր է առաջինը լինել ամեն ինչում: Անդրոյի անհաշտությունը կնոջ լեզվի հետ, առիթից առիթ նրան տնից դուրս անելը, Աշխենի հոգում արդեն իսկ վերածվել են մեծ զայրույթի, իսկ Անդրոյի եւ Մարիամի մասին շշուկները խորացնում են եղածը: Աշխենը նաեւ մեծահոգի եւ սրտացավ մարդ է, նա ընդունակ է հասկանալու Մարիամի կացությունը, այրի կնոջը բաժին հասած հոգսերը: Ուստի Մարիամին տնավարի ծեծելը ոչ թե անողոք կնոջ, այլ իր ունեցածը պաշտպանողի վարմունք է: Աշխենը ձգտում է պահպանել իր եւ իր ընտանիքի արժանապատվությունը:

Մարիամի կապը Անդրոյի հետ իրականում կանոնավոր բնույթ անգամ չի կրում: Անդրոյից առաջ պատահել են ուրիշները, սակայն նրանք էլ չեն մտել Մարիամի կյանք: Ամեն այր, որ երբեւէ նայել է Մարիամի երեսին, նայել է առաջին եւ վերջին անգամ, եւ այդ պատահել է Մարիամի խեղճությունից, իր բազում հոգսերի մեջ մենակությունից եւ բնության պահանջով: Մարիամն իր փխրուն ուսերը խոտի բեռան տակ ցավեցնելով, սեւացնելով կով է պահում, որպեսզի ինքը լինի իր տան տերը, իր գլխի տերն ու իր նեցուկը եւ նեղություն չպատճառի ո՛չ դստերը, ո՛չ փեսային:

Անդրոյին պարբերաբար կանչող նանը հոգատար, անհանգիստ մոր կերպար է, որի աչքը շարունակ հսկում է որդու ապրուստի՝ փեթակների, ուրուրից վնասվող հավերի, ձիու, խոտի, բակի, տան, ամեն բանի վրա: Նանը ականջալուր է ամեն ինչին, նրան հայտնի է անգամ, թե մեղուն երբ է սերունդ տալիս:

Գյուղին անծանոթ վարքուբարք ունեն «վիթխարի» հովեկն ու նրա դուստրերը: Նրանք գյուղաշխարհի մարդիկ չեն, ուստի չեն կարող ըմբռնել Անդրոյի հորդորը՝ իրենց ընտանիքի հոր համար մոռի մուրաբա պատրաստելու մասին: Չեն կարող հասկանալ գետափը զննող հայացքների թաքուն հետաքրքրություններն իրենց արտաքին տեսքի նկատմամբ: Այն, ինչը սովորական է եւ պատշաճ գետափին հանգստացող «վիթխարուն», ամոթալի է եւ հանդուգն բնության ափերի մեջ ներփակ եւ կուսական գյուղի տեսանկյունից:

Ընտանիքը Արեւմուտքում եւ Արեւելքում

«Կենդանին եւ մեռյալը» վիպակի ուսումնասիրության շրջանակներում գրականագետ Վ. Գրիգորյանը կարեւորում է Արեւելք-Արեւմուտք փոխհարաբե-րությունների քննությունը: Որքան հետեւողական աշխատանք է կատարվում՝ հասկանալու բազմածավալ երկի շերտերը, այնքան համոզիչ եւ արժանահավատ է դառնում գրականագետի կատարած դիտարկումը:

«Կենդանին եւ մեռյալը» գրողի համար համաշխարհային մեծ դերակատարում ունեցող Արեւմուտքի եւ իր մի քանի հազարամյա հոգեւոր ու մշակութային արժեքներին հավատարիմ Արեւելքի միջեւ համեմատություններ անցկացնելու եւ ծայրահեղորեն տարբեր հատկանիշներ ընդգծելու հնարավորությունների շրջանակ է: Այդ շրջանակում առավելագույնը հաղորդելու համար հեղինակն ընտրել է, թվում է՝ վիպակին չկապակցվող, սակայն նրա էությունը շոշափելիորեն բացահայտող, համատեղ, համամիասնաբար ապրելու սկզբունքի կարեւոր գործակիցները՝ մորեխի ապրելակերպը. «Մորեխի ապրելակերպը դառնում է ցուցիչ՝ մաթեւոսյանական էքզիստենցիայի կամ անհատի հակադիր ծայրաբեւեռը,- նշում է Վ. Գրիգորյանը, - դառնում է կենսաձեւի բնորոշում եւ իմաստային այս նրբաթելով հյուսվում հերոս-հեղինակի պատմվածքի՝ թփի, մենքի, միասինի եւ միաձույլի կարգը»:

Ստեղծագործության մեջ Միքելանջելո Անտոնիոնիի ֆիլմի ամփոփ նկարագրությունը հայելու պարզորոշ անդրադարձմամբ ցուցադրում է Արեւմուտքի աղտեղությունները: Մարչելոն ու Ժաննան գնում են հիվանդանոց՝ տեսակցելու մի ստեղծագործ ընկերոջ, որը շատ տաղանդավոր բանաստեղծ լինելով, մարող հոգու վեջին օրերն անցկացնում է հիվանդանոցում եւ ոչ իր տանը: Հիվանդանոցի միջանցքում «էգ վագրի աչքերով» կիսախելագար մի կին, միանգամայն անկաշկանդ կերպով փնտրում է Մարչելոյի ընկերակցությունը: Մարչելոյի մեջ ապրող հանդարտ տղամարդուց իր անհանգիստ ակնկալիքներն ունի նաեւ տան աղախինը:

Քաղաքակրթության եւ հարստությունների քաղաք Միլանում մի խումբ պատանիներ պահի թելադրանքով գզվռտոց են սարքում քաղաքի արվարձաններից մեկում եւ այդ անում են միմյանց հանդեպ այնպիսի ատելությամբ, որ «երկաթե վարագույրի միջով էլ կանցներ»: Մի կողմից քաղաքն իր հարկի տակ ամփոփում է «զարմանքի պես, բացականչության չափ շատ» հարստություն ունեցողներին, մյուս կողմից այն կարիք ունի նեգրուհու հայրենիքից՝ «վայրենիների երկրից ջերմություն ու թրթիռ ներմուծելու»: Սա մի քաղաք է, որի համայնապատկերը դյուրությամբ կարելի է համեմատել Ներոնի ժամանակների հետ, այստեղ քաղաքակրթություն կոչվածը զգալիորեն շեղվել է բուն քաղաքակրթությունից եւ հարստությունը ստացել է կործանարար բնույթ: Իրական սերն արդեն հազվագյուտ բան է այս մարդկանց շրջանում, նրանցից յուրաքանչյուրն ապրում է իր միայնության հետ:

Ժաննան աչքի է ընկնում իրականության գիտակցությամբ, այդ իսկ պատճառով նրա կյանքում առաջնային են դառնում իսկական սերը, իսկական հարաբերությունները, ինչը հերոսուհին ակնկալում է ամուսնուց՝ Մարչելոյից՝ «մեծ, անհայտ, սպանիչ մի սեր..., իսկ կյանքը՝ ձանձրալի, իսկ տագնապը՝ անընդհատ...»: Սակայն Ժաննայի ցանկությունն այդպես էլ կյանքի չի կոչվում. փոխարենն ամուսինները հայտնվում են մի սովորական ջրափոսում, իրենց մարմինների սովորական հպումով:

Եզրափակելով ֆիլմը, Մաթեւոսյանը խոսուն խորհրդանիշների միջոցով, համապարփակ հաղորդագրությամբ ներկայացնում է մեծ քաղաքում պարպվող միասնությունը, ավարտվող հարազատությունը, կապերի խզումը. «Հեռվի տնակը կանգնած էր անշարժ, ցողունները կանգնած էին անշարժ, անտառ, կարծես, ծառերի կարծես ծառերի բանակ էր, բայց ծառերը կանգնած էին անջատ, անտառի եզր ելած կաղնին անտառի հետ կապ չուներ, գանգուր բոխին կանգնած էր անջատ, բոլոր ծառերը

կանգնած էին անջատ առ անջատ, ամեն ինչ կանգնած էր ինքն իր համար, ոչ մեկը ոչ ոքի հետ չուներ ոչ մի կապվածություն»:

Այս համեստ դրվագը, որը տարբեր գաղափարների խտացում ունի իր մեջ, հստակորեն սահմանազատում է մաթեւոսյանական եւ արտաքին աշխարհը միմյանցից, պահպանողական արժեհամակարգերը՝ խորտակվող բարոյականությունից, Արեւելքը՝ Արեւմուտքից: Այս ֆիլմը օտար աղտեղությունների համապարփակ նկարագրություն է՝ ձեւված Արեւմուտքի չափանիշներով, ուստի պատահական չէ, որ արժանացել է աշխարհի ամենաանվանի՝ Կաննի, Վենետիկի, Բարսելոնայի, Սան-Պաուլոյի, Մեխիկոյի, Լոս-Անջելեսի, Ալժիրի, Ստոկհոլմի եւ Պրահայի կինոփառատոնների բարձրագույն մրցանակներին: Օրինաչափ է նաեւ, որ նույն ուղով ընթացող աշխարհը չի ընդդիմացել բարոյականության այսպիսի դրսեւորմանը: «Գիշեր» ֆիլմը, փաստորեն, ներկայացրել է կյանքը՝ իր ստեղծման ժամանակի մեջ. «Արդի բազմաթիվ արեւմտյան գիտնականներ,-նկատում է Ռիմա Միրումյանը,- ստիպված են ընդունել, որ արդիականությանը այդպես էլ չի հաջողվել լիակատար եւ վերջնական հաղթանակ տոնել ավանդապաշտության նկատմամբ: Ընդ որում, պատմական զարգացման օրինաչափությունների ու միտումների, ինչպես նաեւ Արեւմուտքում իսկ դիտարկվող հասարակական կեցության ռացիոնալ սկզբունքների արժեզրկման շարժընթացի իմաստավորումը թույլ է տալիս պնդել, որ ավանդույթը շատ ավելի կենսունակ է, քան որեւէ ռացիոնալ սկզբունք: Սակայն, պետք է նկատել, որ Արեւմուտքը վաղուց ի վեր կորցրել է վերահսկողությունը ավանդույթի պահպանության նկատմամբ: Մեր խորին համոզմամբ, ավանդույթը կարող է կենսունակ լինել այն ազգերի շրջանում, որտեղ պետական եւ ազգային շահագրգռվածություն կա:

Վերադառնալով «Գիշեր» ֆիլմին, նկատենք, որ այն միայնակ չէ իր բովանդակության, իր որակների մեջ, ճիշտ հակառակը՝ ֆիլմը դուրս է եկել այն աշխարհի ծոցից, որի ուշադրության առարկան պետք է դառնար հետագայում: «Ասել է թե,- նկատում է գրականագետ Վ. Գրիգորյանը,- մարդկությունն իր լավագույն՝ քաղաքակիրթ մասով ճանաչում է Անտոնիոնիի ֆիլմը, դրանում եղած փիլիսոփայական, բարոյական հարցադրումները, ուստի դրան հակադրվելու ոչ միայն ուժ, անգամ ցանկություն էլ չի դրսեւորի աշխարհի մնացած կեսը, որ հազիվ թե ասելու բան ունենա»:

Պատահական ոչինչ չկա վիպակի հեղինակի այն դիտողության մեջ, որ «Գիշեր» ֆիլմի հերոսները կարող էին հինգական երեխա ունենալ, հանքափոր լինել, կթվոր ու հնձվոր լինել, գետով փայտ առաքողե լինել եւ ա՜յդ կլիներ իսկական կյանքը, եւ այդ էր Մաթեւոսյանի հարեւանությամբ, նրա շնչի տակ, հայկական հին երդիկների եւ նոր տանիքների հովանու ներքո իսկապես ապրող, անձրեւ ժամանակ կրակի մոտ ոսկրածուծները տաքացնող աշխատավորների, բարոյական աշխարհի բնակիչների կյանքը:

Դեռեւս վիպակի սկզբում Վիկտոր Մակարովին հետաքրքրում է սենսացիոն նորությունն այն մասին, որ Օնասիսը կնության է առել Ժակլին Քենեդիին, իսկ նրա զրուցակիցները խորհրդածում են իրադարձության նպատակի շուրջ. «Օնասիսն անհայտ պետություն էր, - մեկնաբանում է Մակարովը՝ «Ծառերը» վիպակում, - Ժակլին Քենեդիի հետ ամուսնությամբ հիմա դարձավ հայտնի պետություն»:

Հերոսի դիտարկումը բացեիբաց խոսում է այն մասին, որ այստեղ մարդկային հարաբերությունները կառուցվում են մաթեմատիկական հաշվարկների վրա: Ուստի, հասկանալիորեն, Պողոս Յավրումյանն իր Արեւելյան, կենդանի, ինքնաբուխ սիրով, չէր կարող Ժակլին Քենեդիի նման մի կնոջ, որն իր բնօրրանի արժանի զավակն էր, հետաքրքրել իր սիրով՝ «...իր խնայողություններն ու աշխատավարձը կբավականացնեն նրա երեխաների ապրուստ-ուսումին, տեսնեն չի բավականացնում՝ ինքը կաշխատի երկու հերթ», եւ այդ բոլորը գրված ազնիվ մղումներով, սիրիական անապատների նավթամուղի աշխատանքների միջից, այն վեհ տեսիլքով, որ «իրենց ընտանիքը հայի բախտավոր ընտանիք կլինի»:

«...Քաղաքակիրթ աշխարհը, փաստորեն, «երջանիկ անգիտության» մեջ է, եւ նրան տրվում են աշխարհի հաշվարկելի ձեւերը, երեւույթների արտաքին որակները եւ ոչ կենդանի կյանքն ամբողջությամբ»,- իրավացիորեն նկատում է Վ. Գրիգորյանը: Արիստոտել Օնասիսը, թեեւ տակավին երիտասարդ տարիքից մեծ դրամաշրջանառության մեջ էր եղել եւ իր առաջին միլիոնը վաստակել էր դեռեւս 25 տարեկանում, սակայն նրա նյութական անսահմանափակ միջոցների մեջ հետագայում ապահով կյանք էր վարելու Ժակլին Քենեդին: Իհարկե, հնարավոր չէ չնկատել Օնասիսի՝ սեփական եկամուտները սեփական անձի ճանաչման գործին ծառայեցնելու ճկունությունը: «Սա հարաբերությունների նոր աստիճան է, երբ լուծվում են անհատական որակները, եւ անցում է կատարվում «նախրային կենսաձեւին»:

Վիպակի կենտրոնական հերոս Արմենակ Մնացականյանի կենսափորձը ծանոթ է մարդկային ուրիշ տեսակի: Այդ տեսակը փոքր-ինչ այլ բաներ է արժեւորում եւ դրանք գուցե գեղեցիկ են եւ կարող են որեւէ սցենարի մեջ լինել, ինչպես Մոսկվաբնակ Ռաիսա Վասիլեւնան է նկատում, սակայն հասկանալի չեն իրենց ազնվական ակունքների ողջ ընդգրկունությամբ: Այստեղ գյուղական սիրող ամուսինը ոչխարի հոտը թողնում է քնած ընկերոջը՝ սիրած կնոջ հետ գիշերը արժեւորելու համար, իսկ հետո փութով վերադառնում է սար՝ աշխատանքի հոգսն ընկերոջ հետ կիսելու պարտականությամբ: Այստեղ սովորական եւ հանապազօրյա երեւույթներ են հարաբերությունների ջերմությունը, սերը, ազնվությունը, այս բնույթի ինչ որ կուզես, եւ խորթ է հարաբերությունների կառուցումը հանուն կապիտալի:

«Կենդանին եւ մեռյալը» վիպակն իր ողջ կառուցվածքով հակադրվում է մաթեւոսյանական բարոյականությանն ու արժեհամակարգին: «Բախումն այստեղ անհամեմատ սուր է: Այն ծագում է ոչ թե մակերեսային տպավորություններից, այլ որոշակի չափանիշներից, բարոյական ըմբռնումների, անհատական աշխարհայացքի եւ նույնքան օբյեկտիվ իրականությունների անհամապատասխանությունից»,- կարդում ենք Ս. Փանոսյանի մոտ: Վերջին միտքն ամենից առաջ արձանագրում է Գեորգի Կոնստանտինովիչը.«Կապիտալի աշխարհում մարդը մենակ է, Մակարո՛վ»:

Նա կապիտալի ազդեցության հետեւանք է համարում բանակների, ընտանիքների, ազգերի, պետությունների կազմալուծումը, եւ չի սխալվում:

/շարունակելի/

Ռուզան Վարդանյան

9.qxd 10/05/2026 15:32 Page 8

ԼՈՐԵՏԱ ՄՈՒՐԱԴՅԱՆԻ ՔՆԱՐԱԿԱՆ ՈՒ ԳԵՂԱԳԻՏԱԿԱՆ ԱՃԽԱՐՀԸ

ՆՈՒՐԻ -Լորետա Լեւոնի Մուրադյանը ծնվել է 1988 թվականին, Գյումրիում, բանաստեղծ Լեւոն Մուրադյանի ընտանիքում: Ավարտել է Գյումրիի ,Բալատոնե վարժարանը: 2011թ. գերազանցությամբ ավարտել է Երեւանի Եվրոպական ակադեմիայի միջազգային հարաբերություններ բաժինը՝ ստանալով բակալավրի աստիճան:

2013 թվականին ավարտել Կառավարման ակադեմիայի հանրային կառավարում բաժինը՝ ստանալով մագիստրոսի աստիճան: 2025 թվականին ավարտել է Վանաձորի Հովհաննես Թումանյանի անվան պետական համալսարանը՝ ստանալով հասարակագիտության ուսուցչի որակավորում: 2014-2022 թվականներին աշխատել է ՀՀ Ազգային ժողովում: 2021-23 թվականներին աշխատել է Վարդենիսի Վիկտոր Համբարձումյանի անվան մանկավարժական ինստիտուտում որպես դասախոս: 2022 թվականից աշխատում է Մեծ Մասրիկի միջնակարգ դպրոցում՝ որպես հասարակագիտության ուսուցչուհի: 2017 թվականին «Արարատ Մկրտումյան» երիտասարդ գրողների ամենամյա հանրապետական մրցանակաբաշխությունում ճանաչվել է լավագույն գրող, ինչի արդյունքում լույս է ընծայվել անդրանիկ՝ «Թաքնագրեր» ժողովածուն: Հանդիսանում է Լեւոն Անանյանի անվան մրցանակաբաշխության մրցանակակիր: 2019 թ. տպագրվել է ղրիմահայ գրողների միության «Հայրենիքը սրտում» ալմանախում, 2018 թ.՝ Գագիկ Վարդանյանի «Շիրակ աշխարհ» գրքում: 2019 թ. տպագրվել է «Կրակե ձայների խեցի» ալմանախում: Տպագրվում է «Անդին» գրական ամսագրում, Հայաստանի գրողների միության «Գրական թերթ» պաշտոնաթերթում, Շիրակի Մարզի ԳՄ «Եղեգան փող» պաշտոնաթերթում, Լոռու մարզի ԳՄ «Երկունք» պաշտոնաթերթում, «Գրեթերթ», «Գրանիշ», «Գրական Համշեն» եւ Թեհրանի «Ալիք» թերթերում: Իսկ այսօր արդեն նա դառնում է «Գեղամա աշխարհ» թերթի հյուրը:

Լորետա Մուրադյանի բանաստեղծություններն աչքի են ընկնում իրենց ինքնատիպությամբ, քնարականությամբ, խոհափիլիսոփայությամբ, զուլալ, գեղեցիկ ու հնչեղ հայերենով:

Խոսրով Խլղաթյան

***

Զարկ է հորդում ու նզովք
Իմ մենության քնարին,
Իբլիսի ձեռք են կարգել
Տարաշխարհիկ հրերն իմ:
Կրկին վհուկ եմ սեւվարս
Կամ մի զինվոր դավադիր,
Ծովախորշի ջրահարս,
Ու ժայռերի սեպագիր:
Բայց իմ խաղաղ ծյուներում՝
Ծաղկած փխրուն շնչից մով,
Աստծու մազերն եմ սանրում
Հուլունքագործ աչքերով:
Դառնում քնքուշ բալենի
Ու թաց շվաք սիրածոր,
Որ կախարդեմ, վար բերեմ
Իմ ամպերին փետրավոր:
Թող զմրուխտե բույրից լույս
Կախվեն աստղերն ու մի սիրտ,
Եվ կաքավը նինջ դառնա
Վայելքներից այդ վճիտ:
Նզովքները հենց հալվեն
Ու բալենուն մերկ ժպտան,
Թող քնարը սեր երգե
Իբլիսուհի աղջկան:

***

Ես Գիժ էի
ավազներ առաջ,
ու ապրում էի ազատ.
արգելաճաղերն ինձ համար
լոկ թռչունների երամներ էին
մաս-մաս չվող,
սերը
անմահների հովտից
փչող խնկաթաթախ տրոփն էր,
աշխարհի բոլոր անիմաստ
խոսակցություններից ու
մեկի ժպիտից մաղվող
հաշիշն
ու նինջը...
ավազներ առաջ
անհուպ շոյանքն էր
լարում օդն
ու պայթում խոյակների տակ,
ու կապու՛յտ, կապու՛յտ
շունչն էր թռչկոտում
յասամանների շուրջ...
ավազներ առաջ
ես Վայրի էի
ու ազատ,
երբ դեռ մի պոետ
չէր հասցրել եռալռին մարգարեանալ
մինչեւ աքաղաղի կանչը...
Ավազներ առաջ
ժամանակը խցանման մեջ ընկավ...
երբ վերջապես դուրս գա այնտեղից
ես անպայման կսպասեմ
երրորդ օրվան՝
որպեսզի
հարություն
առնեմ...

***

Թո՜ւյլ տուր ինձ էսօր
Հայհոյե՛լ կարգին,
Մարդատյաց լինել...
Եվ ատելավառ
Հույզե՛ր շպրտել,
Անառա՜կ լինել...
Լինել եսապա՛շտ՝
Առանց զղջումի
Ու կարեկցանքի...
Ու լինել կարի՜ճ,
Որ կուտակում է
Թույներ հանցանքի...
Թող որ գեթ էսօր
Կյանքի խնջույքին
Խեղկատակ լինեմ...
Իրեն կորցրած,
Ցավից ոռնացող
Մի գազա՛ն լինեմ..

***

Ահա ցողաբույր լուսաբացը դուրս կգա աղոթքի
Ու հարսնորեն կասի՝
Եղիցի Արքայություն Քո...
Եվ հասկերը կհասունանան
ու կպայթեն ...
Լեռներում մի Շունչ նրբորեն
Կհամբուրի շուրթերը սրինգի
Ու քաղցրացած սիրտդ
Հնչյունների ցոլանքով դուրս կթռչի սրինգից...
Հայացքդ կթեւածի
լազուր ծփանքներիս վրայով
եւ քնքնշությունից ընդարմացած մատներով
ծուլորեն կշոյես
արեւից պսպղացող ալիքներս,
որ դեպի քեզ են բերում
սպասումի քամիները՝
նախասկզբնական աշխարհներից փչող:
Եվ օդը ժպիտով կվազի սարերն ի վեր
Ու ամոթխածությունը մոռացած՝
կփսփսա ուրցերի հետ:
Մակընթացություն կլինի,
Կտեղատրվեն նույնիսկ Լեռները,
Եվ ոչ ոք չի հասկանա՝
Ինչպես Ծովը պոկեց Լեռներն ու տարավ իր հետ...
Անզորությունից կկծկվի դաշտը,
Որ Ձգողական էին կոչում մի ժամանակ,
եւ երկիրը կմոռանա իր առանցքի մասին...
Երբ Լեռներում մի շունչ
Կհամբուրի շուրթերը սրինգի
Բոլոր բառերը նույն իմաստը կունենան...
Եվ տիեզերքը կդառնա մեկ կաթիլ...

***

Ցնցում են տղերքը երկինքը,
Երկինքը վիպական Ծռերի.
Այդ ու՞ր ես տանում իմ տանիքը,
Քարավա՜ն շղթայված լեռների...
Այդ ու՞ր ես պտուղներն իմ տանում
եւ Պոկում իմ լեզուն Թարթառից,
Դարձիր գետ, թե տենչում ես հեռուն,
Չե՜ն քոչում արմատները ծառից:
Շանթատոք մարտիկներ են զարկել
Ու ճայթել թեւերիս լեռնակիր,
Այս հողում Նժդեհներ են մարտել՝
Խոյանքով Վճռական Մենակի:
Ցնցում են տղերքը երկինքը,
Երկինքը վիպական Ծռերի.
Չե՛ս պոկի Լեռների տանիքը,
Լեռները շղթայել չի՛ լինի...

***

Երբ մառախուղն է գլորվում սարերից,
Պետք է շրջվել ու գրկել այն,
Որովհետեւ քո մենության Բմբուլե բարձն է լսել հոգուդ շառաչը:
Եկել է, որ իր թեւերի մեջ առնի
Բարակած նյարդդ,
Որ հանկարծ չպոկվես քամվելուց,
Եկել է, որ թորի խոնավությունդ
Ու արտասվի անձրեւով...
Երբ մառախուղն է գլորվում սարերից,
Պետք է լռել նրա հետ.
Մի՜ վախեցիր, հոգի՛ս,
որովհետեւ միշտ լինում է այն, ինչ լինում է...
Քեզ մի սիրտ է պետք,
Որ չուզես քնել ջրափոսում,
Մի սիրտ՝ լուսաբացվելու
Ու մի սիրտ՝ ժպտալու համար:
Երբ մառախուղն է գլորվում սարերից,
Պետք է շրջվել ու գրկել այն,
Որովհետեւ բոլոր անձրեւներից ու ցրտից ծաղիկներ են ծնվում մի օր...

Լորետա Մուրադյան

ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ԵՐԵՔ ՀԱՄԱՅՆՔՆԵՐՈՒՄ ԱՎԱՐՏՎԵԼ ԵՆ «ՀՀ ՎԱՐՉԱՊԵՏԻ ԳԱՎԱԹ» ՍԻՐՈՂԱԿԱՆ ԽՃՈՒՂԱՅԻՆ ՀԵԾԱՆՎԱՎԱԶՔԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՓՈՒԼԻ ՄՐՑՈՒՄՆԵՐԸ

Գեղարքունիքի մարզի երեք համայնքներում ավարտվել են «ՀՀ Վարչապետի գավաթ» սիրողական խճուղային հեծանվավազքի համայնքային փուլի մրցումները:

Սեւան համայնքում մրցաշարի համայնքային փուլի մեկնարկը տրվել է Դրախտիկ բնակավայրից:Մրցաշարն անցկացվել է երկու տարիքային խմբով՝ հանրակրթական ուսումնական հաստատությունների 7-9-րդ դասարանի (1 տղա եւ 1 աղջիկ), 10-12-րդ դասարանի (2 տղա եւ 2 աղջիկ) եւ ֆիզկուլտուրայի 1-ական ուսուցիչ թիմային կազմով: Մասնակիցները հաղթահարել են 25 կմ ճանապարհահատված եւ հասել մինչեւ Ծովագյուղի խաչմերուկ: Հեծանվորդների անվտանգությունն ապահովել են Գեղարքունիքի պարեկները: 7-9-րդ դասարանների մրցապայքարում (1 տղա եւ 1 աղջիկ) 1-ին տեղը զբաղեցրել է Սեւանի Մ. Մաշտոցի անվան Հ.1 հիմնական դպրոցի թիմը: 2-րդ տեղը զբաղեցրել է Սեւանի Հ.4 հիմնական դպրոցի թիմը, 3-րդ տեղը՝ Սեւանի Յա. Զարոբյանի անվան Հ. 2 հիմնական դպրոցի թիմը:

10-12-րդ դասարանների մրցապայքարում (2 տղա եւ 2 աղջիկ) թիմային հաշվարկով 1-ին տեղը զբաղեցրել է Լճաշենի Ա. Տեր-Գրիգորյանի անվան միջնակարգ դպրոցի թիմը, 2-րդ տեղը՝ Վարսերի Ռ. Պետրոսյանի անվան միջնակարգ դպրոցի թիմը, 3-րդ տեղը՝ Ծաղկունքի Հովհ. Թումանյանի անվան բաց դպրոցի թիմը:

Ճամբարակ համայնքում մրցաշարը մեկնարկել է Շողակաթ բնակավայրից ու ավարտվել «Արեւիկ» հանգստյան գոտու մոտ: 7-9-րդ դասարանների մրցապայքարում 1-ին տեղը գրավել է Գետիկի միջնակարգ դպրոցի թիմը, 2-րդ տեղը՝Դրախտիկի միջնակարգ դպրոցի թիմը, 3-րդ տեղը՝ Թթուջրի միջնակարգ դպրոցի թիմը:

10-12-րդ դասարանների մրցապայքարում 1-ին տեղը գրավել է Դրախտիկի միջնակարգ դպրոցի թիմը, 2-րդ տեղը՝ Այգուտի միջնակարգ դպրոցի թիմը, 3-րդ տեղը՝ Դպրաբակի միջնակարգ դպրոցի թիմը:

Մարտունի համայնքում մրցումների մեկնարկը տրվել է Վաղաշեն գյուղի մոտից ու ավարտվել Կարճաղբյուր գյուղի տարածքում, 25 կիլոմետր երկարությամբ: 7-9-րդ դասարանների մրցապայքարում 1-ին տեղը գրավել է Ծակքարի միջնակարգ դպրոցի թիմը, 2-րդ տեղը՝ Վերին Գետաշենի Հ.1 միջնակարգ դպրոցի թիմը, 3-րդ տեղը՝ Վերին Գետաշենի Հ.2 դպրոցի թիմը:

10-12-րդ դասարանների մրցապայքարում 1-ին տեղը գրավել է Վաղաշենի միջնակարգ դպրոցի թիմը, 2-րդ տեղը՝ Ծակքարի միջնակարգ դպրոցի թիմը, 3-րդ տեղը՝ Մարտունու ավագ դպրոցի թիմը:

Հաղթող թիմերը պարգեւատրվել են ՀՀ ԿԳՄՍ նախարարության հավաստագրերով: 1-3-րդ տեղեր գրված թիմերը մայիսի 27-ին կմասնակցեն մրցաշարի մարզային փուլին:

Վարդենիս եւ Գավառ համայնքներում մրցաշարի համայնքային փուլերը կանցկացվեն համապատասխանաբար մայիսի 12-ին եւ 15-ին:

Գեղամ Զարվադարյան

ԳԵՂԱՄԱ աշխարհ

Լրատվական գործունեություն իրականացնող «Գեղարքունիք» թերթի խմբագրություն» ՓԲԸ: Հասցեն՝ ք. Գավառ, Կենտրոնական հրապարակ 7
էլ.հասցե՝ khosrov1@yandex. ru
Գլխավոր խմբագիր՝ Խոսրով Խլղաթյան
հեռ. բջջ. 094022692

Վկայական՝ 02 Ա 050560: Գրանցման համարը՝ 25.120.00834:
Տրված 07.05.2001թ.: Տպաքանակը՝ 1000: Ծավալը՝ 2 մամուլ:
Թողարկման օրը՝ 11. 05. 2026 թ.:
Տպագրվում է «Սամարկ» ՍՊԸ տպարանում:
«Գեղամա աշխարհ» թերթի բոլոր համարներին կարող եք ծանոթանալ https://tert.nla.am կայքում: